Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Լ. Ժ. Կ. — Ա. Ս. Խ. Հ. Ռուսմնա.-Մեթոդական Սեկտոր

Ա. Սահակյան, Ս. Ղուկասյան

ԿՈՆՍՊԵԿՏՆԵՐ

«Կուլտարտավ» դասագրքով պարապվող
կուլտբանակայինների համար

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

40 կոպ.

379(077)
Ա-15

ԱԶԵՐՆԵԾՐ
Բաքու — 1932

379(077)
Ц-15

AZƏRNƏŞR mətbəəsində basıldı.
Bakı, Balşoj Marskoj və Krasno-Presnensqi quçələrin tinində № 16/36

Baş Mətbyat Mudirliqi № 336.
Sifariş 96. Sajı 3000. Siatəlçu A.

06 APR 2010 32-К
СА 467
БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ИСТОРИИ
Академии Наук
СССР

ԿՈՆՍՊԵԿՏՆԵՐ ՅԵՎ ՊԼԱՆՆԵՐ

Հասակավորներին գրագիտություն սովորեցնելու համար

(Ձեռնարկ կուլտբանակայինների համար)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սոցիալիստական շինարարության գործում անգրագիտության վերացման գործն ազգաբնակչության մեջ տարվող քաղաքական և կուլտուրական աշխատանքի հիմքն է կազմում։

Կուլտարշավի միջոցով հարվածում ենք ցարական իշխանությունից մնացած խայտառակ ժառանգությունը՝ անգրագիտությունն ու տգիտությանը։ Վերացնելով բանվորների, կոլխոզնիկների, չքավոր ու միջակ գյուղացիների և տանտիրուհիների անգրագիտությունն ու կիսագրագիտությունը, նրանց մասնակից ենք դարձնում մեր յերկրի սոցիալիստական շինարարության ընդհանուր գործին։

ԽՍՀՄ-յան ինդուստրալացումը, գյուղացիական մանը, ցիր ու ցան տնտեսությունների կոլեկտիվացումը և դրանց հետ կապված մեր դասակարգային թշնամիների կատաղի դիմադրությունը քաղաքում ու մանավանդ գյուղում մեզնից պահանջում են սոցիալիզմի կառուցմանը մասնակցողների միլիոնավոր կադրեր։ Այդ խնդիրների լուծումը սուր կերպով պահանջում է անգրագիտության ու կիսագրագիտության վերացման գործը դարձնել մասսաների հասարակական-քաղաքական դաստիարակման, քաղաքական լուսավորության և կազմակերպման մի հզոր զենք։

Վերոհիշյալ խնդիրների իրագործումը մեզնից պահանջում է մեծ ուշադրություն դարձնել կուլտբանակայինների կադրեր ստեղծելու և ավանդելիք նյութի մշակման մեթոդի վրա։ Կուլտբանակայինների ամբակուռ շարքեր ստեղծելն ու նրանց մեթոդական պատրաստականությունն տալը մեր ընդհանուր գործի հիմնական դրավականներից մեկն է։

Մեր ունեցած կուլտբանակայինների ստվար մասը մեր դպրոցների և կրթական հիմնարկությունների ուսանողությունն է,

25 JUL 2013
54.821

վորը հաճախ զուրկ է մեթոդական պատրաստականությունից ու փորձառությունից։ Դասի հաջողությունը գլխավորապես կախված է դասատվի մեթոդապես պատրաստ լինելուց։ Ուստի անթույլատրելի քայլ կհամարվի՝ կուլտրանակալիններին այս ասպարեզում ոգնություն չհասցնելը և նրանց աշխատանքը լավ հիմքերի վրա չդնելը։ Այս հանգամանքներից յելնելով կազմվում են այս կոնսպեկտները, վորոնք բավականաչափ կդյուրացնեն կուլտրանակալինների աշխատանքները։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՌ ԵՐԵՎԱՆ
ZUUՌ-Арш ССР
Ս. ՍՏԱՍԻՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ
56285-66

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՆԱՄԱԿ

Բանվորին արագ գրագետ դարձնելը գրագիտություն սովորեցնելու մեթոդի հիմնական խնդիրն է։

Առաջին իսկ դասից սովորողներին պիտի բացատրել, վոր գրագիտություն սովորեցնելն այժմ այնպես չի տարվում, ինչպես առաջ։ Առաջ անգիր սովորեցնում էին բոլոր հնչյունները, հետո վանկերով կարդալ էին տալիս անիմաստ վանկեր ու բառերը և այլն։ Այժմ, յեթե այդ ձևով վարվենք, շատ ժամանակ կվատնենք, իսկ մեզ հարկավոր է ամենակարճ ժամանակամիջոցում վերացնել բանվորի և գյուղացու անգրագիտությունը, վորով հնարավորություն կստեղծենք անդրագետ բանվորի, կոլխոզնիկի, չքավոր ու միջակ գյուղացու համար ավելի ակտիվ մասնակցություն ունենալու կուսակցության և կառավարության առաջադրած խնդիրների կյանքում արագ իրագործելում։

Նոր մեթոդի եյությունը կայանում է նրանում, վոր գրագիտության սովորեցնելը սկսվում է սովորողներին ծանոթացնելով խոսքի (նախադասության) հետ, ապա այդ նախադասությունը բաժանվում է բառերի, բառերը՝ վանկերի, վանկերը՝ առանձին-առանձին հնչյունների։ Այնուհետև այդ հնչյուններից կազմվում են նոր վանկեր, վանկերից՝ բառեր, բառերից՝ նախադասություններ և այլն։

Առաջին նախադասությունը պիտի վերցնել տեքստի վերևում գետեղված նկարի շուրջն ունեցած կարճ զրույցից։ Շարժական այբբենի տառերից կազմվում և այդ հիմնական նախադասությունը և ամրացվում թղթե ժապավենի վրա, իսկ վերջինս՝ գրատախտակի (կամ պատի) վրա։ Այդ ձևը հնարավորություն է տալիս պատկերացնելու տառերի մի տեղից մյուս տեղը փոխադրելը և նոր բառեր ու նախադասություններ կազմելը։ Դրա համար գրագիտություն սովորեցնելու շրջանում պիտի անպայման ոգտագործել շարժական այբբենը։ Այդ այբբենի տառերից կազմած նախադասությունը դասատուն ամրացնում է գրատախտակին, այնուհետև բաժանում է բառերի, բառերը՝ վանկերի, վանկերը՝ հնչյունների և այլն (տես տառերի կոնսպեկտները)։

Բացի վերոհիշյալից՝ սովորողին նրա հասարակական-քաղաքական ու արտադրական-պլանային գործունեության համար պիտի տալ պոլիտեխնիքական գիտելիքներ և ունակություններ։

Մեր ժողովրդական անտեսության ֆակտորները, յերկրի քաղաքական ձգտումների և նվաճումների ընդհանուր աճումն ու զարգացումը յուրաքանչյուր սովորողից պահանջում են ամպայման ձեռք բերել պոլիտեխնիքական գիտելիքների մինիմումը։

Կուլտբանակային իր ամբողջ աշխատանքի ընթացքում անպայման պիտի պահպանի հետևյալ պայմանները.

1. Զբաղմունքները կառուցել ժամանակակից կոնկրետ նյութի վրա, կապելով նորը սովորողների գիտողությունների և կենսական (արտադրական) փորձառության հետ։ Սովորողների փորձը ու դիտողությունները սիստեմի վերածելով և լրացնելով՝ պիտի հասկացնել նրանց յուրացնել տալ կուսակցության ու կառավարության առաջադրած հերթական խնդիրները։

2. Մշակածը և ըմբռնածը պիտի կապված լինի սովորողների արտադրական-քաղաքական կոնկրետ աշխատանքի հետ։

3. Պոլիտեխնիքական գիտելիքները պիտի հանդիսանան վորպես արտադրական պրոցեսի անմիջական ուսումնասիրության հետևանք, պոլիտեխնիքական ունակությունները՝—արտադրական պրոցեսներին մասնակցելու և վորոշ տեխնիկական հմտություն ձեռք բերելու հետևանք։

Աշխատանքի նոր, սոցիալիստական մեթոդներն ու ձևերը, վորոնց շնորհիվ մեր սոցիալիստական շինարարությունը հսկայական նվաճումներ է ձեռք բերել, պիտի կիրառվեն նաև գրագիտություն սովորեցնելու ընթացքում։ Սոցմրցությունը և հարվածայնությունը պիտի գուգորդվեն դասավանդման մեթոդների հետ, վորով ապահոված կլինի աշխատանքի հաջողությունն ու արդյունավետությունը։

ԿՈՆՍՊԵԿՏՆԵՐ

Հասակավորների գրագիտական խմբակներում պարապող կուլտբանակայինների համար։

(Դասագիրքը՝ «Կուլտարշավ»)

ԶԲԱՂՄՈՒՆՔ № 1

Զբաղմունքի նպատակը

Ցուցացնել ֆրազներ, բառեր, վանկեր։ Ծանոթացնել «ա» «ն» և «ե» տառ-հնչյունների հետ։

Զբաղմունքի պլանը

1. Նախապատրաստական զրույց նկարի շուրջը։
2. Տալ ֆրազի (նախադասության), բառի, վանկի և տառ-հնչյունի մասին գաղափար, ճիշտ ձևակերպել բանավոր պատասխանները։
3. Գրավոր։

Զբաղմունքի ընթացքը

Զրույցի հիմնական միտքը՝

Հարց—Ի՞նչ նպատակով ենք հավաքվել այստեղ։

Պաս.—Սովորելու։

Հարց—Ինչու՞ առաջ ձեզ չեին սովորեցնում։

Պաս.—Ցեռնատու չեր կալվածատերերին ու կապիտալիստներին—վորովհետև նրանք ավելի հեշտ եին շահագործում տգետ ու մութ ժողովրդին։

Հարց—Ինչու՞ խորհրդային իշխանությունը բոլոր անգրագետներին սովորեցնում է։

Պաս.—Վորովհետև գրագետ մարդն ավելի ոգտակար է մեր հասարակության համար և ավելի ակտիվ կարող է աշխատել մեր սոցիալիստական շինարարության գործում։

Կարդալը

Գաղափար տալ ֆրազի (նախադասության), բառի, վանկի և տառ-հնչյունի մասին։ Որինակ՝ «Մենք հավաքվել ենք սովորելու», «Մա Ասոն է» ֆրազներ են (նախադասություններ)։ Այդ

ֆրազներից մեկը՝ «Սա Ասոն է»—դասատուն գրում է թղթե ժապավենի վրա։

Նա դանդաղ կարդում և արտասանում է այդ նախադասությունը՝ «Սա Ասոն է»։ Նույնը կրկնում են մի քանի սովորողներ, ապա բոլորը՝ խմբովին։ Հետո դասատուն այդ թղթե ժապավենը բաժանում է 3 մասի՝ ըստ բառերի քանակի՝ «Սա—Ասոն—է»։

Հարց—Քանի՞ մասի յեմ բաժանել ֆրազը։

Պաս.—3 մասի։

Հարց—Վո՞րն է առաջին մասը։

Պաս.—...«Սա»։

Դասաս.—«Սա» մի բառ է։

Աշակերտները կրկնում են այդ բառը։

Հարց—(Ցույց տալով)։ Վո՞րն է յերկրորդ բառը։ «Ասոն»... (կրկնում են աշակերտները 2-րդ բառը առանձին-առանձին և խմբովին)։

Հարց—Վո՞րն է 3-րդ բառը։

Պաս.—«է»։

Հարց—Ուրեմն քանի՞ բառից և կազմված այդ նախադասությունֆրազը։

Պաս.—3 բառից, 1-ը՝ «Սա», 2-րդը՝ «Ասոն» և 3-րդը՝ «է»։ Բառերի տեղը փոխելով կազմում են նոր նախադասություն՝ «Ասոն է սա»։ Աշակերտները կարդում են առանձին-առանձին և միասին I, II և III բառերը։ Բառերի մասին լավ գաղափար կազմելու համար վերցնվում են մի քանի ուրիշ նախադասություններ և վերոհիշյալ նախադասության պես վերլուծում։

Բառերի մասին գաղափար կազմելուց հետո դասատուն վերցնում է «Ասոն» բառը (անշլագից) և, պարզ արտասանելով վանկերը՝ բաժանում մասերի՝ «Ա—սոն» (2 վանկ)։

Հարց.—Քանի՞ մասի բաժանեցի այդ բառը։

Պաս. —2 մասի։

Հարց.—Վո՞րն է առաջին մասը։

Պաս.—«Ա»։

Հարց—Վո՞րն է 2-րդ մասը։

Պաս.—«սոն»։

Հարց—Ո՞վ կարող է արտասանել 2-րդ մասը։

Պաս.—...«սոն»։

(Վանկերի մասին լավ գաղափար կազմելու համար վերցնում են մի քանի յերկվանկ բառեր և բաժանում վանկերի)։

Վանկերի մասին լավ գաղափար կազմելուց հետո, դասատուն հայտնում է, որ ընդհանրապես մենք լսում ենք հնչյունները, որինակ՝ տանը նստած լսում ենք քամու, լացի, յերգելու և այլ ձայներ՝ ո՞յ, սսս..., ա՜, ԷԷ՜... և այլն։

Ապա վերցնում է «Ասոն է» նախադասությունը և աշակերտներին արտասանել տալիս նրա բառերը. I—«Ասոն», II—«է»։

Դասատուն «Ասոն» բառը բաժանում է մասերի և, յերկարացնելով առաջին վանկը՝ արտասանում է՝ «Ասաա—սոն»։ Հետո հարցնում է՝

— Ինչ ձայն եք լսում առաջին մասում։

Պաս.—«Ա». Նույն հնչյունը (ձայնը) կրկնում են աշակերտներն առանձին-առանձին և խմբովին։ Դասատուն գրատախտակին կամ պատին ամրացնում է «Ա» տառը և արտասանում։ Նույնն արտասանում են աշակերտները միասին։ Նույն «Ա» տառը գտնում են շարժական այբբենում և դասագրքում։ Դասատուն վերցնում է բառի 2-րդ վանկը՝ «սոն», առանձնապես շեշտելով այդ վանկի վերջին հնչյունը՝—«սոննն»։ Ապա հարցնում է՝ «Ինչ եք լսում վերջում։

Պաս.—«ն»։ Նույն «ն» տառը գտնում են շարժական այբբենում և դասագրքում։

Հետո շարժական տառերից կազմում են «ան» վանկը։ Դասատուն ցույց է տալիս «ա» տառը. աշակերտներն արտասանում են, իսկ այն միջոցին տալիս է «ն» տառը, կազմվում է«ան» վանկը։

Տառերի տեղերը փոխելով՝ կազմում են «նա» վանկը։ Հետո կազմում են «նան» բառը։

«Ան» և «նա» վանկերը միացնելով՝ կազմում են «Աննա» բառը։

Հետո վերցնում են նախադասության 2-րդ բառը՝ «է» և ասում, որ «է» բառը միաժամանակ և տառ-հնչյուն է։ Նույն տառը գտնում են դասագրքում ու շարժական այբբենում և ամրացնում գրատախտակին։ Կազմում են «Աննան է» ֆրազը։ Այսպիսով սովորում են կազմել և արտասանել «Աննա», «Աննան» և «Աննան է» բառերը։

Գրավոր

Մի տողում գրել՝ «ա», «է», «ն» տառերը։ Մի կամ յերկու տողում գրել «ան» «նա», «նան» և «Աննա», «Աննան է» վանկերն ու բառերը։

ԶԲԱՂՄՈՒՆՔ № 2

Զբաղմունքի նպատակը

Ցուցացնել նոր բառեր ու վանկեր։
Ծանոթացնել «ս» և «ո» տառ-հնչյունների հետ։

Զբաղմունքի պլանը

1. Կրկնել անցած դասը։
2. Նախապատրաստական զրույց։
3. Մշակել «Սա Ասոն է» նախադասությունը։ Ծանոթացնել «սա», «սո», «սոն», «սոս» վանկերի հետ։ Կարդալ տեքստը։ Առանձնապես շեշտել «ս» և «ո» տառերը։ Մշակած վանկերից կազմել նոր բառեր և բառերից՝ նոր նախադասություններ։
4. Գրել մշակած վանկերը, բառերը և նախադասությունները։

Զբաղմունքի ընթացքը

Յերկրորդ դասը, ինչպես և բոլոր հաջորդ դասերը, սկսվում են անցածի կարճ կրկնողությամբ։ Կրկնողությունից հետո զրույց է կազմակերպվում դասագրքի 2-րդ յերեսում զետեղված նկարի շուրջը։

Հարց ու պատասխանի ձևով դալիս են այն յեզրակացության, որ հնգամյակի 4-րդ և վերջին տարվա հերթական խնդիրներից մեկը—սոց. շինարարության համար պրոլետարական վարակյալ կադրեր պատրաստելն է։ Կադրեր են պատրաստում լիկբեզները, կիսագրագիտական դպրոցները, բանվորական ուսման կոմբինատները և այլն։ Անգրագիտության վերացման անհրաժեշտությունը մինչև 1932 թ. ապրիլ ամիսը և այդ խնդրի իրականացնումը մեր առորյա աշխատանքների պլանի գլխավոր կետերից մեկն է։

Առաջարկվում են մոտավորապես հետևյալ հարցերը.

1. Ի՞նչ եք տեսնում նկարում։
2. Ո՞վ է մեր յերկրում տնտեսության տերը։
3. Ի՞նչպես ենք զարգացնում մեր տնտեսությունը։
4. Վո՞ր տեղ են կադրեր պատրաստում։

Զրույցից հետո դասատուն գրատախտակին ամրացնում է թղթե ժապավենի վրա գրած «Ասոն է սա» նախադասությունը և ապա կարդում է դանդաղ, ամեն մի բառը մատով ցույց տալով։ Նույնն առանձին-առանձին կրկնում են մի քանի սովորողներ և ապա խմբովին։ Հետո դասատուն թղթե ժապավենը բաժանում է յերեք մասի (3 բառի)։

Հարց—Քանի՞ մասի բաժանեցի նախադասությունը։
Պաս.—3 մասի։
Հարց—Ուրեմն քանի՞ բառից է կազմված այդ նախադասությունը։
Պաս.—3 բառից։
Հարց—Վո՞ր է 1-ին բառը։

Պաս.—...«Ասոն»։
Հարց—Վո՞ր է 2-րդ բառը։
Պաս.—«է»։
Հարց – Վո՞ր է 3-րդ բառը։
Պաս.—«սա»։

Բառերի տեղերը փոխելով՝ կազմում են նոր նախադասություն՝ «սա Ասոն է»։ Սովորողները կարդում են նոր նախադասությունը և անջատում՝ 1-ին բառը՝ «սա», ապա 2-րդը՝ «Ասոն», իսկ հետո 3-րդը՝ «է»։ Նախադասությունը բառերի բաժանելուց հետո վերցնում են «Ասոն» բառը և բաժանում վանկերի «Ա-սոն»։

Հարց—Վո՞ր է առաջին վանկը։
Պաս. – «Ա»։
Հարց—Վո՞ր է 2-րդ վանկը։
Պաս.—«սոն»։

Ավելի լավ յուրացնելու համար վերցնում են յերկվանկանի «Սոնա» բառը և բաժանում վանկերի՝ «Սո», «նա»։ Դասատուն վերցնում է «Սո» վանկը և, յերկարացնելով վերջին հնչյունը՝ «սոոո» հարցնում է.

Հարց—Ի՞նչ եք լսում վերջում։
Պաս.—«ո»։

Նույն «ո» տառը գտնում են շարժական այբբենում և դասագրքում։ Շարժական տառերից կազմում են «ոն» վանկը։ Դասատուն ցույց է տալիս «ո» տառը, առաջարկում է սովորողներին արտասանել, իսկ ինքը նրա աջ կողմում ցույց է տալիս «ն» տառը։ Ստացվում է «ոն» վանկը։ «Ո» հնչյունի հետ ծանոթանալուց հետո դասատուն վերցնում է նորից «սո» վանկը և արտասանելով հարցնում է՝—Ի՞նչ եք լսում սկզբում (առաջ, ձախ կողմում)։

Պաս.—սսս...

Նույն «ս» տառը գտնում են շարժական այբբենում և դասագրքում։ Շարժական տառերից կազմում են «սո» վանկը։

Աջ կողմից ավելացնելով «ն» և արտասանելով՝ ստանում են «սոն» վանկը։

Այնուհետև «Ասոն» բառը վեր են ածում վանկերի և ստանում իրենց ծանոթ «Ա—սոն» վանկն ու բառը։

Նույն ձևով էլ կազմում են «սա», «սոս», «նա» վանկերը և «նասոս», «սա նասոս է» բառերն ու նախադասությունները։

Կարդալը

Բառերը կազմելուց հետո դասատուն առաջարկում է գրքում գտնել «Ասոն», «է», «սա» բառերը։ Կարդում են «Ասոն է» հոդվածը։

Գրավոր

Գրատախտակից կես-կես տող արտագրել «ս» և «ո» տառերը։ Մի-մի տող գրել «Ասոն է», «սա Ասոն է» բառերը։

ԶԲԱՂՄՈՒՆՔ № 3

Զբաղմունքի նպատակը

Յուրացնել նոր նախադասություններ, բառեր և վանկեր։ Գրել «1» և «4» թվանշաններ։ Ամրապնդել սովորած տառ-հնչյունների գործածությունը։

Զբաղմունքի պլանը

1. Կրկնել անցած դասը։
2. 3-րդ յերեսի վրա զետեղված նկարի շուրջը նախապատրաստական զրույց կազմակերպել։
3. Մշակել «Սա նասոս է» հոդվածը։
Կրկնել անցած տառ-հնչյունները։
Մշակած վանկերից կազմել նոր բառեր, բառերից՝ նոր նախադասություններ։
4. Գրել մշակած նախադասությունները, վանկերն ու բառերը։
5. Ծանոթացնել 1, 4 թվանշանների հետ։

Զբաղմունքի ընթացքը

Դասատուն, յելնելով նախորդ որվա զրույցից՝ բացատրում է, վոր 5-յակի 3-րդ վճռական տարում Ազնեվին արտադրել է 15.327 հազ. տոննն հում նավթ, կատարելագործելով նավթարդյունաբերության գործը, մեխանիզացիայի յենթարկելով հանքերը, ուր նավթը հորերից քաշելու համար դրված են մեծ քանակով նասոսներ և այլն։

Հարցեր

1. Ի՞նչ եք տեսնում այս նկարում (նասոսներ)։
2. Ի՞նչու ենք այժմ ամեն տեղ հորերի վրա խորաքաշ նասոսներ դնում։ (Նասոսներով խոր հորերից շատ նավթ են քաշում)։
3. Առաջ ի՞նչով եին հորերից նավթ հանում։ (Մեծ վեդրոն ներով—ժելոնկաներով)։ Նախկին դասերի յեղանակով մշակում են «սա նասոս է» նախադասությունն ու գրում գրատախտակի վրա։ Հետո այդ նախադասությունը բաժանում են բառերի (1-ը՝ «սա», II-րդը՝ «նասոս» և III-րդը՝ «է»)։ Սովորողներն առանձին-առանձին և ապա խմբովին կրկնում են ամեն մի բառը։ «Նասոս» բառը բաժանում են վանկերի՝ «նա», «սոս»։ Անցած և նոր վանկերից կազմում են բառեր՝ «Սոնան», «Ասոն» «նասոս», «Աննա» և այլն։

Շարժական այբբենի տառերից կազմում են այդ նոր բառերը։ Սովորողները կարդում են կազմած այդ նոր բառերը, հետո կրկնում առանձին-առանձին ու խմբովին։ Այդ բոլորից հետո գրքի 3-րդ յերեսում գտնում են իրենց կազմած բառերը և կարդում, կրկնելով առանձին-առանձին և խմբովին։

Գրավոր

Գրատախտակից արտագրում են անցած բառերը՝ «Սոնան է», Ասոն է», «նասոս է», «սա նասոս է»։

Հաշիվ

Ծանոթացնել «1» և «4» թվանշանների հետ։ Դասատուն վերցնելով գիրքը և մատիտը հարց է տալիս՝ «սա ի՞նչ է». պատասխանում են՝—«գիրք է»։ Հարց.—քանի՞ հատ է։ Պատ.—մեկ։ Դասատուն գրում է գրատախտակին «1» թվանշանը և առաջարկում է սովորողներին գրել տետրերում։ Հետո գրում են՝ «1 նասոս»։ Այս ձևով սովորում են «4» և գրում տետրերում «4», «4 նասոս» («1» և «4» թվանշանները հեշտ գրվող թվանշաններ են)։

ԶԲԱՂՄՈՒՆՔ № 4

Զբաղմունքի նպատակը

Յուրացնել նոր բառեր և վանկեր։
Ծանոթացնել «ու» տառ-հնչյունի հետ։

Զբաղմունքի պլանը

1. Կրկնել անցած դասը։
2. Նախապատրաստական զրույց։
3. Մշակել «Ասոն ու Սոնան» նախադասությունը։ Ծանոթացնել վանկերի հետ։ Յուրացնել անջատած «ու» տառ-հնչյունը։
4. Գրել մշակած տառ-հնչյունները, վանկերը, բառերն ու նախադասությունները։
5. Ծանոթացնել 6 և 7 թվանշանների հետ։

Զբաղմունքի ընթացքը

Շարունակելով նախընթաց զբաղմունքի զրույցը՝ (3-րդ վճռական տարում ունեցած նվաճումների մասին) շեշտում են, վոր

կանանց ուժերի ներգրավումն արդյունաբերության մեջ ու նրանցից կադրեր պատրաստելը մեր կարևոր խնդիրներից մեկն է։ Շեշտել, որ մի քանի արդյունաբերական ճյուղեր (տեքստիլ, քիմիական, սննդի, կար ու ձևի և այլն) անմիջապես պետք է կիրառեն կանանց ուժերի ոգտագործումը։

Հարցեր

1. Ի՞նչ եք տեսնում այս նկարում (կոոր գործելու մաշինաներ)։

2. Վո՞ր տեղ են լինում այդպիսի մաշինները (տեքստիլ ֆաբրիկայում)։

3. Ո՞վքեր են աշխատում այդ մեքենաների վրա (Ջուլհակները—կին ու տղամարդ)։

4. Ի՞նչ է արտադրում տեքստիլ ֆաբրիկան—(չիթ, մահուդ, կտավ և այլ կտորեղեններ)։

5. Վո՞ր տեղ է գտնվում Բազվի տեքստիլ ֆաբրիկան (Զբխում և կրում է ընկ. Լենինի անունը)։

Զրույցից հետո վերցնում են «Ասոն ու Սոնան» նախադասությունը և բաժանում բառերի։

1. Վո՞ր ն է առաջին բառը (Ասոն).
2. Վո՞ր ն է յերրորդ բառը (Սոնան)։
3. Իսկ վո՞ր ն է յերկրորդ բառը (ու)։

Ուսուցիչը բացատրում է, որ «ու»-ն միևնույն ժամանակ տառ-հնչյուն է։ Սովորողներն արտասանում են այդ «ու» հնչյունը։ «Ու» տառը ամրացնում են գրատախտակի վրա։

Սովորողները մտածում ու գտնում են «ու» հնչյունով գրվող բառեր։

Անցած ու նոր տառ-հնչյուններից շարժական տառերի միջոցով կազմում են «Նու», «նե», «Նունե», «Սոնան ու Ասոն» «Աննան ու Նունեն»՝ վանկերն ու բառերը։

Այդ ձևով բավական վարժություններ անելուց հետո բաց են անում գրքի 4-րդ յերեսն ու կարդում առանձին-առանձին և խմբովին։

Գրավոր

Տետրերում գրում են (կես-կես տող) «ու» փոքրատառ և գլխատառ։ Ապա արտագրում են գրատախտակից «Ասոն ու Սոնան» «Սոնան ու Ասոն», «Նունեն ու Աննան» նախադասությունները։

Ուղղագրական ունակություններ

Մարդկանց անունները գրվում են գլխատառով։

Հաշիվ

Նախընթաց դասի ձևով յուրացնել 6 և 7 թվանշանները (գրել ու կարդալ)։

ԶԲԱՂՄՈՒՆՔ № 5

Զբաղմունքի նպատակը

Յուրացնել նոր նախադասություններ, բառեր ու վանկեր։ Ծանոթացնել «ի» տառ-հնչյունի հետ։ Գրել 5 և 3 թվանշանները։

Զբաղմունքի պլանը

1. Կրկնել անցած դասը։
2. 5-րդ յերեսի վրա զետեղված նկարի շուրջը նախապատրաստական զրույց։
3. Մշակել «Իսան, Սոնան ու Ասոն» նախադասությունը։ Յուրացնել «ի» տառ հնչյունը։ Գաղափար տալ գլխատառի մասին։ Մշակած վանկերից կազմել նոր բառեր, բառերից՝ նոր նախադասություններ։
4. Գրել մշակած տառ-հնչյունները, վանկերը, բառերն ու նախադասությունները։

Զբաղմունքի ընթացքը

Շարունակելով նախորդ դասի զրույցը, շեշտում են, որ աշխատանքային ուժեղ դիսցիպլինան ոժանդակում է արդյունաբերության զարգացմանը։

Պրոլետարիատը լարել է իր ուժերը հնգամյա պլանը 4 տարում իրագործելու։ Այդ պատճառով անհրաժեշտ է խիստ պայքարել պրոդուլների, բանվորական ուժի հոսունության, հարբեցողության դեմ, վորոնք խանգարում են աշխատանքային դիսցիպլինան։

Դասատուն այնուհետև սովորողների ուշադրությունը հրավիրում է դասագրքի 5-րդ յերեսում զետեղված նկարի վրա։ Սովորողները զրույց են կազմակերպում այդ նկարի շուրջը։ Նշում են, որ գործարանի նախադռանը ծառայողներից մեկը հաշվի է առնում գործի յեկած բանվորներին ու բանվորուհիներին։

Դռան մոտ յերևում են Ասոն, Իսան ու Սոնան, վորոնք այդ գործարանի բանվորներ են։ Զրույցից վերցնում են «Իսան, Սոնան ու Ասոն» նախադասությունը, բաժանում բառերի։

1. Վո՞ր ն է I-ին բառը (Իսան)։
2. Վո՞ր ն է II-րդ բառը (Սոնան)։
3. Վո՞ր ն է III-րդ բառը (ու)։
4. Վո՞ր ն է IV-րդ բառը (Ասոն)։

Բառերի տեղերը փոփոխելով կազմում են նոր նախադասություններ՝ «Ասոն, Սոնան ու Իսան», «Իսան, Ասոն ու Սոնան»։ Բառերը բաժանում են վանկերի։ Սովորողներն «Իսա» բառը բաժանում են վանկերի։

Առանձնացնելով «Ի» տառը (վանկը) «սան» վանկից պատասխանում են հետևյալ հարցերին.

1. Վերջն ե առաջին վանկը—(Ի)։
2. Քանի տառից ե կազմված II-րդ վանկը (սան) (3 տառից)։
3. Քանի տառից ե կազմված I-ին վանկը (մեկ)։
4. Ի՞նչ եք լսում (Ի)։
5. Ո՞վ կարող ե «Ի» տառ ունեցող բառեր ասել (Իվան, Իսա, Իսմայիլ)։

Շարժական այբբենից կազմում են հետևյող բառերը՝ Իսան Սոնան, Ասոն։

Բաց են անում դասագրքի 5-րդ եջը և կարդում տեքստը։

Գրավոր

Գրել «Ի» (գլխատառ և շարքատառ)։

Գրատախտակից արտագրել հետևյալ բառերն ու նախադասությունները։

«Սա Իսան ե»։ «Նա Սոնան ե»։

«Իսան, Սոնան ու Ասոն»։

Հաշիվ

Նախկին դասերի յեղանակով գրել և կարդալ «5» և «3» թվանշանները։

ԶԲԱՂՄՈՒՆՔ № 6

Զբաղմունքի նպատակը

Ցուցացնել նոր նախադասություններ, բառեր, վանկեր ու տառ-հնչյուններ։ Ծանոթացնել «մ» և «շ» տառ-հնչյունների հետ։ Գրել «9» և «2» թվանշանները։

Զբաղմունքի պլանը

1. Կրկնել անցած դասը։
2. 6-րդ յերեսում գետեղված նկարի շուրջը նախապատրաստական զրույց։
3. Մշակել «Սա մաշին ե» նախադասությունը։ Ծանոթացնել «մա», «շին» վանկերի հետ։ Ցուցացնել «մ» և «շ» տառ-հնչյունները։ Մշակած վանկերից կազմել նոր բառեր, իսկ բառերից՝ նոր նախադասություններ։

56285-66

4. Գրել մշակած տառ-հնչյունները, վանկերը, բառերն ու նախադասությունները։
5. Ծանոթացնել «9» և «2» թվանշանների հետ։

Զբաղմունքի ընթացքը

Զրույց նկարի շուրջը։

1.—Ի՞նչ եք տեսնում նկարում (մաշին)։

2.—Վերտեղից ենք ստանում մաշինները (մեր գործարաններից և արտասահմանից)։

3.—Ի՞նչ ենք տալիս կապիտալիստներին գնած մեքենաների փոխարեն (հաց, վոսկի, հում նյութեր, վորոնք մեզ շատ հարկավոր են)։

4.—Ի՞նչ միջոցների ենք դիմում կապիտալիստներից մաշիններ չգնելու համար (կառուցում ենք հսկայական զավոդներ, ֆաբրիկաներ՝ զանազան մաշիններ պատրաստելու համար)։

5. 3-րդ վճռական տարում վերքան նոր ֆաբրիկաներ, հանքեր, զավոդներ ենք գործի դցել (518)։

Վերցնում են «Սա մաշին ե» նախադասությունը։ Սովորողները շարժական տառերից կազմում են այդ նախադասությունը և հետո բաժանում բառերի (I «սա», II «մաշին», III—«ե»)։ Արտասանում են այդ բառերն առանձին-առանձին և խմբովին։

«Մաշին» բառը բաժանում են վանկերի «մա—շին» և կրկնում են առանձին առանձին և խմբովին։

Ապա տրվում են մոտավորապես հետևյալ հարցերը։

Հարց—«մա»՝ վանկում վորն ե ծանոթ տառ-հնչյունը։

Պաս.—«ա», (առանձնացնելով այդ տառը, դնում են գրատախտակի վրա և արտասանում)։

Հարց—Մեր առաջին վանկն ե «մա», իսկ այստեղ դուք ունեք միայն «ա», ուրեմն վոր հնչյունն ե «ա»-ից առաջ։

Պաս.—«մ». «մ» տառը դարձյալ դնում են «ա» տառի ձախ կողմից և սովորողները կրկնում են այդ վանկը։ Նույն ձևով «շին» վանկից անջատում են «շ» տառ-հնչյունը։ Այդ բոլորից հետո տեքստում (եջ 6) գտնում և կարդում են «մաշին», «սա մաշին ե» և այլն։

Գրավոր

Գրատախտակից կամ դրքից արտագրում են «սա մաշին ե», «Մուսան նասոս ե շինում», «1 մաշին», «4 նասոս» ֆրազները։

Ուղղագրական ուսակություններ

Նույնը։

ՊԱՏՈՒՆԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ-Արա ССР
Ա. ԻՄ. Ա.

Հաշիվ

Նախկին դասերի յեղանակով ծանոթացնել «9» և «2» թվանշանների հետ։

ԶԲԱՂՄՈՒՆՔ № 7

Զբաղմունքի նպատակը

Յուրացնել նոր բառեր ու վանկեր։

Ծանոթանալ «կ» և «ր» տառ-հնչյունների հետ։ Ծանոթացնել «8» և «10» թվանշանների հետ։

Զբաղմունքի պլանը

1. Կրկնել անցած դասը։
2. 7-րդ յերեսում զետեղված նկարի և տեքստի շուրջը նախապատրաստական զրույց։
3. Մշակել նոր նախադասություններ և բաժանելով բառերի ու վանկերի, առանձնացել «կ» և «ր» տառ-հնչյուններն ու յուրացնել։
4. Տեքստի ընթերցումը։
5. Մշակած նախադասությունների գրանցումը։

Զբաղմունքի ընթացքը

Անցած դասը կրկնելուց հետո զրույց և կազմակերպվում 7-րդ յերեսում զետեղված նկարի ու տեքստի շուրջը։ Համեմատել կարի մեքենայի դերը ընտանիքում, կուսակցության և խորհրդային արդյունաբերության մեջ։

Առանձնապես շեշտել կարի արդյունաբերության զարգացումը մեզ մոտ, վորտեղ թեթևացնում է կնոջ աշխատանքն ընտանիքում։ Դասատուն պատմում է Վոլոդարսկու անվան ֆաբրիկայի աշխատանքների մասին (ավելի լավ է մինչև դասը եքսկուրսիա ունենալ։) Վերջացվում է «Սա կարի մաշին է» նախադասությունը, նախկին դասերի յեղանակով այդ նախադասությունը բաժանում բառերի, բառերը՝ վանկերի։ «Կարի» բառի I-ին «կա» վանկից անջատում են «կ» տառ հնչյունը։ II-րդ «րի» վանկից անջատում են «ր» տառ-հնչյունը։ Սովորողները մտածում և գտնում են բառեր «կ» և «ր» հնչյուններով (բառի սկզբում, վերջում)։ Անցած և նոր տառերից (շարժական տառերից) կազմում են նոր վանկեր, բառեր և այլն։

Սովորողներն այդ նույն բառերը և վանկերը գտնում են դասագրքում։ Այդ վարժություններից հետո անցնում են տեքստի ընթերցմանը։ Սկզբում կարդում է դասատուն, իսկ հետո կարդացնում մի քանիսին և ապա՝ խմբովին։

Գրավոր

Արտագրել գրքից 7-րդ յերեսի ներքևում զետեղված ձեռագիր նախադասությունները։

Ուղղագրական ունակություններ

Գլխատառը ֆրազի սկզբում։

Հաշիվ

Նախկին դասերի յեղանակով ծանոթանում են «8» և «10» թվանշաններին (զրավոր՝ «Մարոն կարեց 8 շոր»։ «Մանուշը կարեց 10 շոր»)։

ԶԲԱՂՄՈՒՆՔ № 8

Զբաղմունքի նպատակը

Կազմել նոր նախադասություններ, բառեր և վանկեր։ Ծանոթացնել «ք» և «տ» տառ-հնչյունների հետ։ Հիմնավորել վերջակետի և գլխատառի գաղափարը սովորածի շրջանում։ Գրել 1-ից մինչև 10-ը։

Զբաղմունքի պլանը

1. Կրկնել հին դասը։
2. 8-րդ յերեսում զետեղված նկարի և հոդվածի շուրջը կազմակերպել նախապատրաստական զրույց։
3. Ծանոթացնել «կ» և «տ» տառ-հնչյունների հետ։
4. Տետրերում գրել 8-րդ եջի ներքևում զետեղված ձեռագիր տեքստը։
5. Կլոր տասնյակների մասին գաղափար և նրանց գրանցումը (10, 20 . . . . . 90)։

Զբաղմունքի ընթացքը

Կրկնելով անցած դասի նյութը, անցնում են նոր նյութին 8-րդ եջի նկարի և տեքստի շուրջը՝ զրույց, վորի ընթացքում դասատուն շեշտում է ընդհանուր և մասնավորապես բնակարանային շինարարության հսկայական թափը, կապված յերկրի արդյունաբերության զարգացման հետ։ Մեր որերում կուսակցությունը և կառավարությունը մեծ ուշադրություն են դարձնում քաղաքների կոմունալ տնտեսության զարգացման վրա։ Հնգամյակի չորրորդ, վերջին տարում կառավարությունը մի միլյարդ ռուբլուց ավելի դրամ է հատկացնում բնակարանային շինարարությանը։ Վերջին տարիների ընթացքում Բաղվում հսկայական թափով զարգանում է բնակարանային շինարարությունը։ Զրույցից հետո մշակում են «Բար են տաշում» նախադասությունը։

Նախկին դասերի յեղանակով շարժական տառերից կազմած այդ նախադասությունը բաժանում են բառերի, բառերը՝ վանկերի, իսկ վանկերից անջատում են «ք» և «բ» տառ-հնչյունները («քար»-ից՝ «ք» և «տաշում» բառից՝ «տ»)։

Սովորողները մտածում, գտնում են բառեր «ք» և «տ» հնչյուններով։ Անցած և նոր տառ-հնչյուններից շարժական տառերի միջոցով կազմում են նոր վանկեր, բառեր և այլն։ Այդ վարժություններից հետո անցնում են տեքստի ընթերցմանը՝ նախընթաց դասերի յեղանակով։

Գրավոր

Արտագրել գրքից 8-րդ եջի ներքևում գետեղված ձեռագիր տեքստը։

Ուղղագրական ունակություն

Գլխատառը ֆրազի սկզբում և (հատուկ անուններում — կրկնել)

Հաշիվ

Գրել և կարդալ 1-ից մինչև 10-ը (1 շոր, 2 մաշին . . . 5 քար . . . 8 ուստա . . . . 10 աշակերտ)։

ԶԲԱՂՄՈՒՆՔ № 9

Զբաղմունքի նպատակը

1) Ցուցացնել նոր բառեր ու վանկեր։ Ծանոթանալ «պ» և «ը» տառ-հնչյունների հետ. 2) կլոր տասնյակներ 100-ի շրջանում։ Ծանոթացնել հռոմեական թվանշանների հետ՝ I, II, III, IV կամ IIII, V, VI, VII, VIII, IX, X, XI, XII։

Զբաղմունքի պլանը

(Այսուհետև տրվելու են միայն դասերի պլանները)։

Բանավոր

1. Կրկնում են անցած դասի նյութը և անցնում նոր նյութին։

2. Զրույցի ընթացքում դասատուն պարզում է, վոր տները շինում են քարից, աղյուսից, տուֆից, փայտից, բետոնից և այլն։

3. Նախկին դասերի յեղանակով «պատը շարում են» ֆրազը բաժանում են բառերի ու վանկերի և անջատում «պ» ու «ը»» տառ-հնչյունները («պատը» բառի «պա» վանկից անջատում են «պ» և «տը» վանկից՝ «ը» տառ-հնչյունները)։ Սովորողները գրատնում են բառեր նոր տառ-հնչյուններով։ (Կարող են գտնել նաև դասագրքի մեջ)։

Այդ վարժություններից հետո անցնում են տեքստի (9-դ յերեսում) ընթերցմանը։

Գրավոր

Արտագրել գրքի 9-րդ յերեսում գետեղված ձեռագիրը։

Ուղղագրական ունակություններ

Նույնը։

Հաշիվ

1. Գրել և կարդալ կլոր տասնյակները 100-ի շրջանում։
2. Ծանոթացնել հռոմեական թվերի հետ I-ից մինչև XII։

ԶԲԱՂՄՈՒՆՔ № 10*)

Զբաղմունքի նպատակը

Կազմել նոր նախադասություններ, բառեր, վանկեր։ Ծանոթացնել «լ» և «վ» տառ-հնչյունների հետ (դասագրքի եջ 10)։ Հիմնավորել վերջակետի և գլխատառի գաղափարը։ Ծանոթացնել տասնյակների գումարման հետ 10-ից մինչև 50-ը (10+20:20+10, 20+20 և այլն)։

Զբաղմունքի պլանը

Զրույցի ժամանակ պարզել հողվածի գլխավոր միտքը. բանվորի ջրագետ լինելն անհրաժեշտ և մեր տնտեսական և քաղաքական զարգացմանը։ Կառուցելով նորանոր գործարաններ, հանքեր, յերկաթուղիներ ու ֆաբրիկաներ՝ համաձայն նորագույն տեխնիկայի, մեխանիզացիայի յենթարկելով արդյունաբերությունը և դյուղատնտեսությունը, մեզ համար կարևոր են գրագետ մարդիկ, վորպեսզի հեշտ տիրապետեն տեխնիկային և կարողանան ղեկավարել նոր մեքենաները։

Գրատախտակին գրում են «Վանին լավ վարպետ է» նախադասությունը։ Այդ նախադասությունը բաժանում են բառերի,

---

Ծանոթություն.—Դասագրքի 9-րդ եջի ներքևում և 10-րդ եջի վերևում տված նյութերը մշակել 10-րդ զբաղմունքի ընթացքում։ Յեղանակը մնում է նույնը, միայն այն տարբերությամբ, վոր նոր տառ-հնչյունի հետ չեն ծանոթանում, այլ ամրացնում են անցածները։ Նախքան կարդալը պետք է սովորողների գրքերում „Տուն են շինում" հոդվածի առաջին տողում ուղղել՝ „տանում" բառը դարձնել տաշում», վորից հետո այդ տողը կկարդացվի՝ „Սարոն քար է տաշում" և վոչ թե՝ „Սարոն քար է տանում"։

բառերը՝ վանկերի, վանկերը՝ տառ-հնչյունների։ «Վանին» բառի «Վա» վանկից անջատում են «Վ» տառ-հնչյունը, իսկ «լավ» բառից անջատում են «լ» տառ-հնչյունը. հետո սովորողները ժառանգում և գտնում են բառեր այդ տառ-հնչյուններով։ Անցած և նոր յուրացրած տառ-հնչյուններից կազմել նոր բառեր (շարժական տառերից) և նախադասություններ ու կարդալ։ Ապա, անցնելով գրքին, կարդալ և յուրացնել նոր 10-րդ եզի տեքստը՝ «Վանին»։

Գրավոր

Անցնելով գրավորին, արտագրում են հոդվածի ներքևում զետեղած ձեռագիրը։

Հաշիվ

Գումարում 10-ից մինչև 50—կլոր տասնյակներով։

ԶԲԱՂՄՈՒՆՔ № 11

Զբաղմունքի նպատակը

Յուրացնել նոր բառեր ու վանկեր։ Ծանոթացնել «բ» և «հ» տառ-հնչյունների հետ։ Գումարում տասնյակներով 60-ից մինչև 100-ը։

Զբաղմունքի պլանը

Անցած նյութը կրկնելով՝ զրույց կազմակերպել 11-րդ յերեսի նկարի շուրջը։ Այդ զրույցի ժամանակ դասատուն աշխատում է հայտնաբերել մեր սոցիալիստական շինարարության թափն ու բանվորների բնակարանային կացությունն՝ առաջ և հիմա։ (Առաջ՝ խոնավ ու մութ նկուղներ, իսկ այժմ՝ առանձնապես նոր կառուցված լույս, չոր, տաք և ամեն մի հարմարություններով բնակարաններ)։

Հիշեցնել Մոնտինի, Շահումյանի անվան և մյուս բանվորական շենները, նաև բնակարանային շինարարության հսկայական զարգացումը։

Դասատուն գրատախտակին գրում է «Բանվոր Հակոբը» ֆրազը։ Նախկին դասերի յեղանակով նախադասությունը բաժանում են բառերի, վանկերի, հնչյունների։

«Բանվոր» բառի «բա» վանկից անջատում են «բ» տառը։ «Հակոբը» բառի «հա» վանկից անջատում են «հ» տառը։ Սովորողները մտածում ու գտնում են «բ» և «հ» տառ-հնչյուններով բառեր, նույնը գտնելով դասագրքում։ Այդ վարժություններից հետո անցնում են 11-րդ եզի տեքստի մշակմանը նախկին դասերի յեղանակով։

Գրավոր

Արտագրել գրքի 11-րդ եզի ձեռագիրը։

Հաշիվ

Գումարում 60—100 շրջանում տասնյակներով։

ԶԲԱՂՄՈՒՆՔ № 12

Զբաղմունքի նպատակը

Կազմել նոր նախադասություններ, բառեր, վանկեր։ Ծանոթացնել «դ» տառ-հնչյունի հետ։ Խորացնել գլխատառի և վերջակետի գաղափարի կիրառումը։ Յերկնիշ թվերի գրանցումը 20-ի շրջանում։

Զբաղմունքի պլանը

1) Կրկնել անցած դասը։ 2) Դասագրքի 12-րդ յերեսում զետեղած հոդվածի և նկարի շուրջը՝ նախապատրաստական զրույց։ 3) Զրույցի ժամանակ հայտնաբերել հոդվածի գլխավոր իմաստը՝ ա) բանվորի գիտական մակարդակի բարձրացումն անմիջապես ոգնում է մեր տնտեսական զարգացմանը. բ) աշխատանքի մեքենայացման նշանակությունը մեր տնտեսական զարգացման համար. գ) կուստար և խոշոր արդյունաբերությունների տարբերությունը։ Կուստար տնտեսությունների կոոպերացումը։ Բացելով 12-րդ յերեսը, հարցնում է—ինչ եք տեսնում նկարում (դարբնոց)։ Հարց ու պատասխանների միջոցով յերեսն և հանում աշխատանքի մեքենայացման առավելությունները՝ ձեռքի աշխատանքի հանդեպ։ Համեմատության մեջ են դրվում կուստար և խոշոր արդյունաբերությունները և ակներև դարձնում աշխատանքի մեքենայացման առավելությունները, խոշոր արդյունաբերության դերը մեր սոցիալիստական տնտեսության զարգացման գործում։ Միաժամանակ խոսվում է կուստար արդյունաբերության կոոպերացման և զարգացման վերաբերմամբ խորհրդային իշխանության կողմից ձեռք առած միջոցների մասին և որինակներով ապացուցվում կուստար արդյունաբերության կոոպերացումից ստանալիք ոգուտը։

Նախապատրաստական զրույցից հետո անցնում են դասագրքի նյութի մշակմանը։ Նախկին դասերի ձևով «Դարբին Դադաշը» բաժանում են բառերի ու վանկերի։ «Դադաշ» բառի «Դա» վանկից անջատում են «Դ» տառ-հնչյունը։ Սովորողները դասագրքում գտնում են բառեր նոր տառ-հնչյունով։

Անցնում են 12-րդ յերեսի տեքստի ընթերցմանը։

Գրավոր

Արտագրել գրքի 12-րդ յերեսի հոդվածի ներքևի ձեռագրի նախադասությունները։

Ուղղագրական ուսակություններ

Գլխատառը՝ նախադասության սկզբին և վերջակետից հետո։

Հաշիվ

Յերկնիշ թվերի գրանցումը 20-ի շրջանում։

ԶԲԱՂՄՈՒՆՔ № 13

Զբաղմունքի նպատակը

Կազմել նոր նախադասություններ, բառեր, վանկեր։ Ծանոթանալ «Թ» տառ-հնչյունի հետ։ Նրա արտասանությունը համեմատել «տ» և «դ» հնչյունների հետ։ Ծանոթացնել հատուկ անունների հետ։ Յերկնիշ թվերի գրանցումը 21—50-ի շրջանում։

Զբաղմունքի պլանը

Նոր դասը («Նավթի նասոս») յուրացնելու նպատակով դասատուն հարցեր և առաջարկում, վորոնց միջոցով պարզում է, վոր մեր յերկրի բնական գլխավոր հարստություններից մեկը նավթը են։ Առաջ ինչով եյին հորից նավթը հանում (վեդրոներով—ժելոնկաներով)։

Այժմ ինչով են հանում (նասոսներով)։ Խոսվում է աշխատանքի մեքենայացման և արտադրություն բարձրացման միջոցների մասին։

Հոդվածի մշակումը։ Նախկին դասերի ձևով մշակվում է հոդվածը։ «Նավթի նասոս» նախադասությունից «նավթի» բառի «թի» վանկից անջատում են «թ» տառ-հնչյունը։ Համեմատելով «դ» և «տ» հնչյունների հետ, սովորողները գրքում գտնում են բառեր «թ» հնչյունով։ Այդ բոլորից հետո անցնում են 13-րդ եջի տեքստի մշակմանը։

Գրավոր

Արտագրել գրքից 13-րդ յերեսի ձեռագիրը։

Ուղղագրական ուսակություններ

Նույնը։

Հաշիվ

Գրել 21-ից մինչև 50։

ԶԲԱՂՄՈՒՆՔ № 14

Զբաղմունքի նպատակը

Կազմել նոր նախադասություններ, բառեր, վանկեր, ամրապնդել անցածը, յերկնիշ թվերի գումարումը 50-ի շրջանում։

Զբաղմունքի պլանը

Հարց ու պատասխանի միջոցով դասատուն հայտնաբերում է, վոր Ապշերոնյան թերակղզում նավթաբեր ռայոններից մեկը Բալախանին է, վորը նախկին Սաբունչու, Ռամանու ռայոնների հետ միասին կոչվում է Լենինյան ռայոն։

Բացի Լենինյան ռայոնից նավթաբեր են նաև Բիբի—Հեյբաթի (Սուալինյան), Սուրախանու (Որջոնիկիձեյի), Բինագադու (Կիրովի) ռայոնները և այլն։ Բացի Ապշերոնյան թերակղզուց Անդրկովկասում կան նաև Նավթալանի (բժշկական նշանակություն ունեցող), Գանձակից վոչ հեռու և Շիրակի (Վրաստանում) շրջանները։

Դասատուն թվում է նաև Խ. Ս. Հ. Մ. գտնվող նավթահանքերը (Գրոզնի, Մայկոպ, Եմբա, Սալալին, Ուրալ, Միջին Ասիա)։ Տալիս է ամեն մի շրջանի ընդհանուր բնույթը և կանգ առնում գլխավորապես Բագվին վերաբերող տեղեկությունների վրա։ Կանգ է առնում նավթային 5-ամյակի վրա։ Նշում է, վոր նավթային 5-ամյակը կատարել ենք $2^1/_2$ տարում, վոր 5-ամյակի 3-րդ, վճռական տարում ստացվել է մոտ 15.327.000 տոն նավթ։ Իսկ 5-ամյակի վերջում ամբողջ Խորհրդային Միության մեջ կստացվի 46 միլիոն տոն նավթ։

Նախապատրաստական գրույցի վերջում կանգ են առնում նյութի մշակման վրա, վորից հետո անցնում են 14-րդ յերեսում զետեղված տեքստի մշակմանը։

Գրավոր

Գրատախտակից արտագրել «Մենք նավթի հանքեր ունենք։ Որ որի վրա շատանում են մեր հանքերը։ Արտադրենք 46 միլիոն տոն նավթ»։

Ուղղագրական ուսակություններ

Հատուկ անունները գրել գլխատառով. որինակ Սիմոն, Սիրան, Թալիշ։ Սովորողներին հասկացնել, վոր գանազան քաղաքների, գյուղերի, մարդկանց, սարերի, գետերի և նման անունները հատուկ են և գրվում են գլխատառով։

Հաշիվ

Գումարման և հանման հետևյալ ձևի վարժություններ,— 12+46, 55+14, 48—14, 36—12, յերբ գումարման ժամանակ

գումարը տասնյակ չի կազմում, իսկ հանման ժամանակ նվազելին հանելուց մեծ է՝ փոխառման կարիք չկա։

ԶԲԱՂՄՈՒՆՔ № 15

Զբաղմունքի նպատակը

1. Տեղեկություն տալ հորերից նավթը հանելու ձևերի մասին։ Կրկնել դույլերով (ժելոնկա) և նասոսներով նավթ հանելու մասին։ Բացատրել շատրվան խփելու պատճառները։

2. Մշակել «Շատրվան» հոդվածը, առանձնացնելով «փ» տառ-հնչյունը և «№»։ Ծանոթացնել այդ տառն արտասանելու և գրելու ձևերի հետ։ Համեմատել «փ» տառ-հնչյունի և «պ» ու «բ» տառ-հնչյունների արտասանությունները։

3. Խորացնել գումարման և հանման գործողությունները յերկնիշ թվերով 100 շրջանում առանց տասնյակների հասցնելու և առանց փոխառման։

Զբաղմունքի պլանը

Գաղափար տալ շատրվան առաջացնող պատճառների մասին։ Շատրվան առաջացնող պատճառները հայտնաբերելու ժամանակ ամեն կերպ հարվածել մնոտիապաշտությունը, աստվածապաշտությունը և այլն։ Բացատրել, վոր շատրվանի և բնական մի շարք այլ պատահարների (կայծակ, կարկուտ և այլն) պատճառը վոչ թե աստված է, այլ դրանք ուրիշ իրենց բնական պատճառները, վորոնք բացատրվում ու հաստատվում են փորձերի միջոցով։ Խոսել շատրվանի բերանը փակելու մասին, վորով հնարավորություն է լինում նավթը և գազը առանձին խողովակներով հավաքել ամբարներում։ Նախապատրաստական դրույցից հետո անցնում են նյութի մշակմանը։ Նախկին դասերի յեղանակով «№ 12 հորի բերանին փական են դնում» նախադասությունը բաժանում են բառերի, վանկերի։ «փական» բառի «փա» վանկից անջատում են «փ» տառ-հնչյունը և ծանոթանում են «№» նշանի հետ։ Սովորողները — դասագրքում գտնում են «փ» տառ-հնչյունով բառեր։ Դրանից հետո անցնում են 15-րդ յեր. տեքստի մշակմանը։

Գրավոր

Գրատախտակից արտագրել «Շատրվանը շատ նավթ և տալիս։ Նա խփում է ամիսներ։ Փանահը, Կարոն ու Իվանը № 12 հորի բերանին փական են դնում»*)։

---

*) Ծանոթություն.—Դասագրքի 15-րդ յերեսի ներքևից վերև 3-րդ տողի «Ֆանահը» բառի առաջին տառն ուղղել, վոր ստացվի „Փանահ"։

Ուղղագրական ունակություններ

Նույնը խորացնել և ամրապնդել։

Հաշիվ

Գումարում և հանում, վորի ժամանակ ստացվող գումարը միավորներում տասնյակից անցնի, իսկ հանումը փոխառումով։

Վարժություններ 13 + 48 + 68 + 19 − 34 − 18 − 80 − 78

ԶԲԱՂՄՈՒՆՔ № 16

Զբաղմունքի նպատակը

1. Կրկնել Բագվի նավթարդյունաբերական շրջանների մասին (Լենինյան, Ստալինյան, Կիրովի և այլն)։

2. Ծանոթացնել նոր նախադասությունների, բառերի և վանկերի հետ։ Ծանոթացնել «խ» տառ-հնչյունի հետ։ Նոր և անցած տառ-հնչյուններից կազմել նոր վանկեր, բառեր ու նախադասություններ և գրի առնել։

3. Գումարման և հանման գործողությունները 100-ի շրջանում (խորացումն)։

Զբաղմունքի պլանը

1. Կրկնել անցած դասը։

2. Նախապատրաստական դրույց դասագրքի 16-րդ եջի հոդվածի շուրջը։

Հարց ու պատասխանի միջոցով դասատուն հայտնաբերում է, վոր Ապշերոնյան թերակղզում նավթաբեր ռայոններից մեկը, վոր Բալախանին է, վորը նախկին Սաբունչու և Ռամանու ռայոնների հետ միասին կազմում է Լենինյան ռայոնը։ Բացի Լենինյան ռայոնից կան նաև ուրիշ նավթաբեր ռայոններ, օրինակ՝ Բիբի—Հեյբաթ, Սուրախանի, Բինաղադի և այլն։

Բացի Ապշերոնյան թերակղզուց Անդրկովկասում կան նաև ուրիշ նավթաբեր շրջաններ, ինչպես օրինակ Նավթեչալա՝ Սալյանի մոտ, Նավթալանը (բժշկական նշանակություն ունի) Գանձակից դեպի արևելք, Շիրակ—Վրաստանում, (Կախեթիայից դեպի արևելք և այլն)։

Դասատուն աշխատում է հնարավորության չափ ծանոթացնել այդ նավթաբեր շրջանների հետ։ Տալիս է ամեն մի շրջանի արտադրական բնույթը և ծրագիրը՝ հիմնվելով լրագրի տեղեկությունների վրա։ Նաև հայտնաբերում է, թե այդ շրջանները վորքան են կարողանում իրագործել իրենց արտադրական պլանը։

Նախապատրաստական զրույցից հետո անցնում են նյութի մշակմանը։ Նախկին դասերի ձևով «Բալախանի» բառը բաժանում են 4 վանկերի և «խա» վանկից անջատում են «խ» տառ-հնչյունը և կատարում համապատասխան վարժությունները։

Անցնում են 15-րդ յեր. տեքստի մշակմանը։

Գրավոր

Արտագրել գրքի 16-րդ յեր. ձեռագիրը։

Ուղղագրական ունակություններ

Տողադարձն (վորպես վանկելու ունակության հետ կապված մի ունակություն)։

Հաշիվ

Գումարում և հանում 2-նիշ և միանիշ թվերի, որինակ

$$+\begin{smallmatrix}12\\9\end{smallmatrix}\quad +\begin{smallmatrix}19\\3\end{smallmatrix}\quad +\begin{smallmatrix}16\\5\end{smallmatrix}\quad +\begin{smallmatrix}8\\13\end{smallmatrix}\quad -\begin{smallmatrix}11\\2\end{smallmatrix}\quad -\begin{smallmatrix}22\\8\end{smallmatrix}\quad -\begin{smallmatrix}42\\7\end{smallmatrix}\quad -\begin{smallmatrix}83\\9\end{smallmatrix}$$

ԶԲԱՂՄՈՒՆՔ № 17

Զբաղմունքի նպատակը

1. Տալ այն դաղափարը, վոր մեր յերկրի ամբողջ հասատությունների տերն աշխատավոր ժողովուրդն է. նա այդ հարստություններն ու յերկրի իշխանությունը ձեռք է բերել տասնյակ տարիների ընթացքում ժողովրդական պայքարի միջոցով։

2. Մշակել «Ցոլակի նպատակը» հոդվածը, յուրացնելով «ց» տառ-հնչյունը։ Նոր և նախկին դասերին սովորած տառ-հնչյուններից կազմել նոր վանկեր, բառեր ու նախադասություններ և գրի առնել։

Այդ պայքարի ընթացքում բանվորությունն ու աշխատավորությունը շատ զոհեր են տվել և Կոմկուսի ղեկավարությամբ կատարած 1917 թվի Հոկտեմբերյան հեղափոխության շնորհիվ վերջնականապես հասել իրենց նպատակին—իշխանությունը վերցնել և պրոլետարիատի դիկտատուրա հաստատել։

3. Թվաբանությունից վճռել փոքրիկ խնդիրներ գումարման և հանման գործողություններով 100-ի շրջանում։

Զբաղմունքի պլանը

1. Կրկնել անցած նյութը։

2. Նախապատրաստական զրույց «Ցոլակի նպատակը» հոդվածի բովանդակության շուրջը։ Հարց ու պատասխանների միջոցով պարզել, վոր մեր յերկրի ամբողջ հարստություններն ու

իշխանությունը պատկանում է բանվորներին և բոլոր աշխատավորներին։ Նրանք այդ ամենը ձեռք են բերել տասնյակ տարիներ պայքարելով կապիտալիստների ու ցարական իշխանության դեմ։ Այդ պայքարի ժամանակ հեղափոխական բանվորները շատ գրկանքներ են կրել։ Նրանց բանտարկել են, աքսորել Սիբիր, կախաղան հանել, գնդակահարել և այլն։ Այդ պայքարի հետևանքն է յեղել Հոկտեմբերյան հեղափոխությունը, վորի ժամանակ վերջնականապես իշխանությունն ու յերկրի հարստություններն անցել են աշխատավոր դասակարգին։ Այժմ մեր յերկրում վերջ ենք դնում կապիտալիստական շահագործմանը, ստեղծելով սոցիալիստական տնտեսություն։ Նախապատրաստական զրույցից հետո անցնում են դասագրքի 17-րդ էջի նյութի մշակմանը։

Նախկին դասերի ձևով «Ցոլակի նպատակը» ֆրազն բաժանում են բառերի, վանկերի։ «Ցոլակի» բառի առաջին («Ց») վանկից անջատում ու յուրացնում են «ց» տառ-հնչյունը և կատարում համապատասխան վարժություններ։ Դրանից հետո անցնում են 17-րդ էջի տեքստի մշակմանը։

Գրավոր

Արտագրել գրքից 17-րդ էջի ձեռագիրը։

Ուղղագրական ունակություններ

Նույնը։

Հաշիվ

Գումարում և հանում 100-ի շրջանում։

ԶԲԱՂՄՈՒՆՔ № 18

Զբաղմունքի նպատակը

1. Նավթահորերից ստացած հում նավթը մեր նավթազտիչ գավոդներում վերամշակման յենթարկվելը։ Նրանից բենզին, կերոսին, վազելին և այլն ստանալը։ Բացատրել հում նավթի վերամշակման յեղանակը։

2. Մշակել «Գավոդ» հոդվածի առաջին բառը, առանձնացնելով ու յուրացնելով «գ» տառ-հնչյունը։

3. Թվաբանությունից՝ ամրապնդել անցածը։

Զբաղմունքի պլանը

1. Նախապատրաստական զրույց «Գավոդ» հոդվածի շուրջը։ Հարց ու պատասխանի միջոցով պարզել, վոր նավթահորերից ստացած հում նավթը վերամշակման և յենթարկվում մեր նավթազտիչ գործարաններում։ Այդ մշակումը կատարվում է թոր-

ման միջոցով։ Հում նավթը լցնում են մեծ-մեծ կաթսաների մեջ, յեռացնում, վորի հետևանքով նավթի թեթև նյութերը գոլորշիանում են և, անցնելով մի շարք սառը խողովակների միջով, հեղուկ դառնում ու վերջը թափվում արդեն մաքրված վիճակում վորպես բենզին, կերոսին և այլն։ Նաև պարզել, վոր հում նավթից ստանում ենք նույնպես զանազան յուղ ը՝ մեքենաների համար, ներկեր, հոտավետ ջրեր և այլն։ 5-ամյակի 3-րդ վճռական տարում Բագվի ռայոններից պիտի ստանանք 15.327 հազ. տոննն, իսկ 5-ամյակի վերջում՝ 27 միլիոն տոննն։

Նավթի 5-յակը իրագործել ենք $2^1/_2$ տարում։ Այդ հաջողություններին հասել ենք շնորհիվ սոցմրցման, հարվածայինության, հանդիպակաց ի և այլն։

2. Նախապատրաստական զրույցից հետո անցնում են նյութի մշակմանը, նախկին դասերի ձևով «զավոդ» բառը բաժանում են վանկերի և «զա» վանկից անջատում «զ» տառ-հնչյունը, կատարելով բոլոր համապատասխան վարժությունները։

Անցնում են 18-րդ յեր. տեքստի մշակմանը.

Գրավոր

Արտագրել դրատախտակից «Նավթի հանքն հում նավթ է տալիս։ Հում նավթից ստանում ենք բենզին, կերոսին, վազելին, մազութ, պարաֆին ու ելի ուրիշ շատ բաներ»։

Ուղղագրական ունակություններ

Տողադարձի կանոնները (վոչ բարդ կերպով)։

Հաշիվ

Գումարում և հանում 100-ի շրջանում։

ԶԲԱՂՄՈՒՆՔ № 19

Զբաղմունքի նպատակը

1. Մշակելով «Զավոդ» հոդվածի յերկրորդ մասը յուրացնել «յ» «ղ» տառ-հնչյունները և վարժեցնել «յու» գործածության մեջ։ Նոր սովորած տառերից կազմել նոր վանկեր, վանկերից՝ բառեր, բառերից՝ նախադասություններ ու զրի առնել անցած տառ-հնչյունների գլխատառերը։

2. Հոդվածի ընթերցումը։

3. Գումարման և հանման գործողություններով փոքրիկ խնդիրներ 100-ի շրջանում։

Զբաղմունքի պլանը

1. Կրկնել անցած դասը (համառոտ)։

2. Նախապատրաստական զրույց «Զավոդ» հոդվածի յերկրորդ մասի բովանդակության շուրջը։ Հարց ու պատասխանի միջոցով պարզել, վոր հում նավթից ստանում ենք մի քանի տեսակի մեքենայի յուղեր, վոր շատ են հարկավոր մեր սոցիալիստական անտեսությանը (արդյունաբերությանը, գյուղատնտեսությանը և այլն)։ Բենզինով աշխատում են ավտոմոբիլները, սավառնակները և այլն։ Բենզինը, բացի այդ, ունի ռազմական մեծ նշանակություն։

Շատ բենզին ստանալով՝ կապահովենք մեր յերկրի ինքնապաշտպանություն գործը։ Կերոսինը վառում են ճրագներում, տրակտորներում և այլն։ Կերոսինը նույնպես ռազմական նշանակություն ունի. որինակ՝ խոշոր թնդանոթները տեղափոխում են տրակտորների և տանկերի միջոցով, վորոնք աշխատում են կերոսինով։

Մազութով աշխատում են մեր գործարանները։ Մազութը շատ առավելություններ ունի քարածխի և մյուս վառելանյութերի հանդեպ։ Նա քարածխից ավելի շատ տաքություն է տալիս (69 փութ մազութը տալիս է 100 փութ քարածխի տաքություն)։ Ցուղերը հարկավոր են բոլոր տեսակի մեքենաների համար։

3. Նախապատրաստական զրույցից հետո անցնում են նյութի մշակմանը։ Նախկին դասերի ձևով նախ առանձին անցնել «յ» կիսաձայնը և ապա «ղ» տառ-հնչյունները «յուղեր» բառից։ Դրանից հետո սկսում են բառեր կազմել։ Վերցնում են «թե» բառը (կարդում են սովորողները)։ Դասատուն «թե» բառի աջ կողմից ավելացնում է «յ» տառը, ստաց ում է «թեյ»։ Ավելի լավ յուրացնելու համար վերցնում են մի շարք բառեր՝ «հա—հայ», «բա—բայ» «վա—վայ», «լույս» և այլն։

Նույնը կատարում են «ղ» տառ-հնչյունը յուրացնելու համար. նույն ձևերով կազմում են «աղ», «մաղ», «սաղ», «սողալ», «աղալ», «լուղ», «փող» և նման բառեր։ «Ցուղ» բառից անջատելով «ղ» տառը, ստանում են «յու» յերկբարբառը և կազմում այդ յերկբարբառը ունեցող բառեր (յուր, աղբյուր, հյուր և այլն)։

4. Մշակում են 19-րդ եջի տպագիր և ձեռագիր տեքստը։

Գրավոր

Արտագրել 19-րդ եջի ձեռագիրը։

Հաշիվ

Գումարման և հանման բոլոր ձևերի վարժություններ։

ԶԲԱՂՄՈՒՆՔ № 20 և 21

(Տրվում է միայն «Նպաստակը»)

20-րդ զբաղմունքի նպատակը

Այս զբաղմունքների ընթացքում ծանոթացնել սովորողներին՝

1 Թե՝ ինչպես պիտի կազմել հայտարարությունները և պլակատները։

2 Ամեն մի տոնի ու կամպանիայի առթիվ հետագայում գրել տալ պլակատներ (ինչպես այդ տված է 20-րդ եջի (դասագրքի) վերջում համապատասխան բովանդակությամբ։

3 Հաշիվ՝ խորացնել անցածը 100-ի շրջանում։

21-րդ զբաղմունքի նպատակը

1. Ծանոթացնել նամակի ձևի հետ։
2. Կարդալ 21-րդ եջի վրա տված նամակը, մշակել այն։
3. Կոլեկտիվ կերպով կազմել մի կարճ նամակ, գրանցելով այն տետրերում գրատախտակի օգնությամբ։
4. Հասցե գրելու ձևը (անցած տառերով)։
5. «Ցեհ» յերկրաբրառի յուրացումը և վարժեցումն նրա գործածության մեջ։
6. Գրել պլակատ—21-րդ եջի վերջում տվածի բովանդակությամբ։
7. Հաշիվ—նույնը։

ԶԲԱՂՄՈՒՆՔ № 22 և 23

22-րդ զբաղմունքի նպատակը

1. Հոդվածի ընթերցումը։ Գաղափար տալ մեր արհեստակցական միությունների և նրանց աշխատանքի մասին։
2. Մշակելով «Զավկոմի ընտրությունը» հոդվածը, յուրացնել «ժ» տառ-հնչյունը, նախկին ձևով։
3. Գումարման և հանման գործողությունները նախկին դասերի յեղանակով 100-ի շրջանում։

Զբաղմունքի պլանը

1. Նախապատրաստական զրույց կազմակերպել «Զավկոմի ընտրությունը» հոդվածի բովանդակության շուրջը։ Հարց ու պատասխանների միջոցով պարզել, վոր մեր տնտեսության միատեսակ ճյուղերում աշխատող բանվորներից ու ծառայողներից կազմվում են արհեստակցական միություններ, ինչպես որինակ՝ նավթագործների, կառուցողների, կաշեգործների, լուսաշխի, գեղարվեստի և այլն։ Արհեստակցական միությունների ամենաստորին բջիջները տեղական կոմիտեներն են՝ զավկոմ, ֆաբկոմ, տեղկոմ, պատորոյկոմ և այլն։ Արհեստամիությունները տեղական կոմիտեների միջոցով կապվում են աշխատավոր մասսաների հետ, իրագործում են տված արդիֆինպլանը, աշխատավորների մեջ կուլտկրթական աշխատանքներ տանում և այլն։ Զավկոմի վերընտրության ժամանակ հին կազմը հաշվետու զեկուցում է տալիս իր կատարած աշխատանքների մասին, վորից հետո ընտրվում է զավկոմի նոր կազմ։ Նույն ձևով ընտրվում են նաև արհեստամիության ռայոնական կոմիտեն, Ադրբեջանի Կենտրոնական Վարչություն և Կենտրոնական Կոմիտեն։ Մեր արհեստամիությունները ամեն կերպ իրագործում են մեր սոցիալիստական տնտեսության զարգացման պլանը։ Կապիտալիստական յերկրներում կան հեղափոխական (կարմիր) և սոց.-դեմոկրատական (դեղին) արհեստամիություններ։

Դեղին արհեստամիությունների ղեկավարներն ամեն կերպ ողնում են բուրժուազիային, պաշտպանում նրա շահերը, դավաճանում են և արգելք հանդիսանում բանվորների հեղափոխական շարժման զարգացմանը։ Այդ ղեկավարներն ամեն կերպ աշխատում են արդյունաբերության մեջ «խաղաղություն» հաստատել, այսինքն բանվորների և գյուղացիության շահերը վերջնականապես զոհել՝ կապիտալիզմը կրիզիսից փրկելու գործին։ Հեղափոխական արհեստամիությունները գործադուլների միջոցով զարկ են տալիս հեղափոխական շարժմանը, ձգտում են հեղափոխական պայքարի միջոցով լավացնել բանվորների տնտեսական և իրավական դրությունը։

Յերկրագնդի բոլոր հեղափոխական արհմիությունները միացել ու կազմել են Կարմիր Պրոֆինտերն, վորը ղեկավարում է բոլոր կարմիր պրոֆմիությունների աշխատանքները բոլոր յերկրներում։ Կարմիր պրոֆմիությունների շարքերը գնալով խտանում են, իսկ դեղին պրոֆմիություններից բանվորությունը հեռանում է, հասկանալով դրանց դավաճանությունը։

2. Նախապատրաստական զրույցից հետո անցնում են 22 յեր. «Զավկոմի ընտրությունը» հոդվածի մշակմանը։ Նախկին դասերի ձևով անջատում ու յուրացնում են «ժ» տառ-հնչյունը, կատարելով համապատասխան վարժություններ։

Գրավոր

Դասագրքի 22-րդ եջի ձեռագիրն արտագրել տետրերում։

Հաշիվ

Գումարման և հանման վարժություններ 100-ի շրջանում։ Կազմել 2 հարցից բաղկացած փոքրիկ խնդիրներ։*)

ԶԲԱՂՄՈՒՆՔ № 24 և 25

24-րդ զբաղմունքի նպատակը

1. Համեմատել աշխատանքի պայմանները մեզ մոտ և կապիտալիստական յերկրներում (Աշխատանքի պաշտպանություն, 7—6 ժամյա բանվորական որ, արձակուրդներ, հանգստյան տներ, սանատորիա, առողջապահական այլ միջոցներ, կանանց և պատանիների աշխատանքի պայմանները։ Յերեխաների աշխատանքի շահագործումը կապիտալիստական յերկրներում և արգելումը մեզ մոտ)։

2. Մշակելով «Հանգստյան տուն» հոդվածը, յուրացնել «գ» տառ-հնչյունը։ Նոր անցած և ծանոթ տառերից կազմել նոր վանկեր, բառեր, նախադասություններ և գրի առնել։

3. Վերոհիշյալ հոդվածի ընթերցումը։

4. Հաշիվ.—Բազմապատկումն ու բաժանումն իրենց ամենապարզ դեպքերում։

Դասի պլանը

1. Կրկնել անցած նյութը։

2. Նախապատրաստական զրույց «Հանգստյան տուն» հոդվածի շուրջը։ Զրույցի ժամանակ պարզել, վոր մեր յերկրում աշխատանքի պայմաններն ավելի լավ են, քան կապիտալիստական յերկրներում։ Մեզ մոտ բանվորներն աշխատում են որական 7 ժամ։ Շուտով մեր յերկրում 7 ժամյա աշխատանքային որն ամեն տեղ կհաստատվի։ Մեր տնտեսավարության ձևը և ժողտնտեսության արագ աճումն ու զարգացումը հնարավոր են դարձնում մեզ մոտ հետագայում էլ ավելի կրճատել բանվորական որի տևողությունը։ Տնտեսության մեջ բանվորի առողջությանը վնասող պայմաններ ունեցող ճյուղերում բանվորական որի տևողությունն ավելի կարճատև է։ 14—16 տարեկան պատանիները մի-

Ծանոթություն.—1. Նույն պլանով դասագրքի 23-րդ եջի «Հարվածային զավկոմ» հոդվածը, ավելի կարճառոտ նախապատրաստական զրույցով։

Նույն մեթոդներով կիրառել «հ» տառ-հնչյունի և «յա» յերկբարբառի յուրացումը։ Արտագրել ձեռագիր տեքստը։ Թվաբանությունից կրկնել անցած դասի նյութը։

2. Դասագրքի 22-ր դեջի ներքևում շրջանակի մեջ դետեղված «ց» տառի տեղ պետք է լինի «ժ», իսկ 23-րդ եջի ներքևում „ց, յա" տառի ու յերկբարբառի փոխարեն պիտի լինի «ծ» տառը։ Վերոհիշյալները սրբագրիչի թույլատրած սխալներն են, այդ պատճառով էլ խնդրում ենք նախորոք ուղղել բոլոր դասագրքերում (սովորողների)։

այն 4 ժամ են աշխատում, 16-ից մինչև 18 տարեկան—6 ժամ, ստանալով համապատասխան ռոճիկ։ Կանանց և դեռահասների գիշերային աշխատանքն արգելված է։ Տարին մի անգամ բոլոր բանվորներն ու ծառայողներն արձակուրդ են ստանում, վորը լինում է 15 որից վոչ պակաս։ կան նաև 1, 1½ և 2 ամիս արձակուրդ ստացողներ (աշխատանք ծանր լինելու հետ է կապված)։ Բացի արձակուրդներից նրանց ուղարկում են նաև հանգստյան տները, սանատորիաներ և արտադրական եքսկուրսիաներ։

Սոցիալիստական ապահովագրության կասսայի (Սոցստրախի) միջոցով բանվորներին, ծառայողներին, նրանց ընտանիքներին ձրի բժշկական ոգնություն են հասցնում։ Կանայք մայրանալու (ծննդաբերության) ժամանակ հերթից դուրս 3 4 ամիս արձակուրդ են ստանում և միևնույն ժամանակ լրիվ ստանում իրենց աշխատավարձը։ Նորածիններին 9 ամիս նպաստ է տրվում։ Աշխատանքի անընդունակները, հաշմանդամները, ժամանակավոր գործազուրկները (վոր միանգամայն մեզ մոտ վերացել է) և այլն ապահովվում են Սոցապի միջոցով։

Մեզ մոտ գործազուրկներ բոլորովին չկան։ Կապիտալիստական յերկրներում միանգամայն հակառակ պատկերն ենք տեսնում. այնտեղ բանվորներն աշխատում են 9—10 ժամ, ստանում. այնտեղ բանվորներն աշխատում են 9—10 ժամ, ստանում։

ԶԲԱՂՄՈՒՆՔ № 26

Զբաղմունքի նպատակը

1. Մշակելիք հոդվածի շուրջը նախապատրաստական զրույց ունենալով՝ պարզել մանկական պարտեզների նշանակությունը։

2. Մշակել «Մանկական պարտեզ» հոդվածը, անջատելով ու յուրացնելով «Ջ» տառ-հնչյունը, համապատասխան վարժություններով։

3. Հիշյալ հոդվածի ընթերցումը։

Զբաղմունքի պլանը

1. Կրկնել անցած նյութը (համառոտ)։

2. Նախապատրաստական զրույց (դասագրքի) 26-րդ յերեսում զետեղած նկարի շուրջը, վորի ժամանակ պարզել հետևյալը.—Խորհրդային Միության մեջ մեծ ուշադրություն ենք դարձնում յերեխաների ֆիզիկական ու մտավոր զարգացման և կոմունիստական վոգով դաստիարակելու գործի վրա։ Խորհրդային իշխանության մեջ աշխատող մայրերը լայն հնարավորություն ունեն իրենց յերեխաներին մանկական պարտեզ տալու և հանգիստ սրտով իրենց աշխատանքը կատարելու, հավատացած լինելով, վոր այնտեղ յերեխաներին ավելի լավ են կերակրում, զբաղեցնում ու դաստիարակում, քան իրենց տներում, ուր նրանք հաճարյա թե միում են առանց խնամքի։ Մանկական պարտեզներ են բացում արհեստակցական միությունները, կոոպերատիվ կազմակերպությունները, լուսաբաժինները և այլն։

Նախապատրաստական զրույցից հետո անցնել դասագրքի 26-րդ եջի «Մանկապարտեզ» հոդվածի մշակմանը։ Նախկին դասերի ձևով անջատել «Ջ» տառ-հնչյունը և կատարել համապատասխան վարժությունները նախկին զբաղմունքների որինակով։

Գրավոր

Դասագրքի 26-րդ եջի ձեռագիրն արտագրել տետրերում։

Ուղղագրական ունակություններ

Տողադարձ անելը։

Հաշիվ

Բազմապատկումն ու բաժանումը 2-ով, 3-ով 20-ի շրջանում։

ԶԲԱՂՄՈՒՆՔ № 27

Զբաղմունքի պլանը

1. Նախապատրաստական զրույցի միջոցով պարզել յերեխաների խնամքի տարբերությունն ընտանիքում, մսուրում ու մանկապարտեզում և այդ հիմնարկությունների զարգացման ու ծավալման նշանակությունը։

2. Մշակելով «Մսուր» հոդվածը անջատել ու յուրացնել «Չ» տառ-հնչյունը և կատարել համապատասխան վարժություններ։

3. Հոդվածի ընթերցումը։

4. Բազմապատկումն ու բաժանումը 2, 3, 4, 5—20-ի շրջանում։

Զբաղմունքի բովանդակությունը

1. «Մսուր» հոդվածի շուրջը նախապատրաստական զրույց կազմակերպել։ Մոտավորապես կրկնել անցած դասի զրույցի բովանդակությունը։ Համեմատության մեջ առնել և պարզել յերեխաների խնամքի տարբերությունն ընտանիքներում և մսուրներում։

Առանձնապես շեշտել մսուրների և մանկապարտեզների առավելություններն ընտանիքների հանդեպ յերեխաների դաստիարակման գործում։ Նշել, թե մսուրներ, մանկապարտեզներ կառուցելու գործում ծնողների և ընդհանրապես հասարակության ողջունությունը վորքան անհրաժեշտ է։

Նախապատրաստական զրույցից հետ անցնել «Մսուր» հոդվածի ընթերցմանը։ Նախկին դասերի ձևով անջատել «Չ» տառ-հնչյունը։ Նոր և առաջուց անցած տառերից կազմել վանկեր, բառեր և նախադասություններ։

Գրավոր

Տեքստի տակ զետեղած ձեռագիրն արտագրել։

Ուղղագրական ունակություններ

Կրկնել անցած ունակությունները։

Հաշիվ

Բազմապատկման և բաժանման տվյալ ձևի վարժություններ

6×5 9×5 13×5 $40 : 5$ $75 : 5$ և այլն։

ԶԲԱՂՄՈՒՆՔ № 28

Զբաղմունքի բովանդակությունը

Մշակել «Ռադիո» հոդվածը, անջատելով «ռ» տառ-հնչունը։ Սովորած տառերից կազմել նոր վանկեր, բառեր, նախադասություններ և գլի առնել։ Հոդվածի ընթերցումը։

Նախապատրաստական զրույցի միջոցով պարզել ռադիոյի նշանակությունը։ Ռադիոֆիկացիայի ենք յենթարկում վոչ թե միայն քաղաքները, այլ և գյուղերը։

Ռադիոն, ինչպես և կինոն, թատրոնը և այլն դասակարգային կատեգորիա լինելով, մեծ դեր են հանդիսանում տիրող դասակարգերի ձեռքում։ Նրանց միջոցով արտասահմանում կապիտալիստական պետությունները շարունակում են աշխատավորությանը մոլորել, հեռու պահել դասակարգային պայքարից և հաշտեցնել տիրող կարգերի հետ։ Մեզ մոտ ռադիոն մասսաներին ծանոթանում է անում սոցիալիստական շինարարությանը, պայքարում է կուսակցության և կառավարության առաջադրած խնդիրների իրագործման համար, մեծ դեր և խաղում կուլտուրական հեղափոխության գործում և այլն։

Բանավոր

Մշակել «Ռադիո» հոդվածը։ Նախ կարդում է դասատուն հոդվածը սկզբից մինչև վերջը, հետո կարդացնում է շատ թե քիչ ուժեղներին և ապա բացատրում անհասկանալի բառերը։ Վերջում դասատուն պատմել է տալիս (հարց ու պատասխանի միջոցով) կարդացածի և զրույցի բովանդակությունը։

Նախկին դասերի յեղանակով առանձնացնել «ռ» տառ-հնչյունը։

Գրավոր

Անցած դասի յեղանակով վարժություններ։ Անցնել զումարման և հանման բարդ գործողություններին։

ԶԲԱՂՄՈՒՆՔ № 29-30

I

Զրույցի բովանդակությունը

Համառոտ կրկնել անցած դասը։

29-րդ յերեսում զետեղված նկարի շուրջը՝ ժոտավորապես հետևյալ բովանդակությամբ զրույց կազմակերպել։

«Գործարանի հարվածային բանվորները ժողով են գումարել։ Ներկա յեղող հարվածայիններից մեկը զեկուցում է հարվածայնության և սոցմրցման նշանակության մասին։ Հնգամյակի սկզբի տարիներում կապիտալիստները ծաղրում եյին մեր հնգամյա պլանը, ասելով, վոր մենք նրա 25 տոկոսն անգամ չենք կարողանալու իրագործել։

Ավելի ճիշտը՝ նրանք վախենում եյին, վոր այդ պլանը լրիվ կիրագործվի մեր յերկրում։

Կապիտալիստական յերկրների ժողովրդ. տնտեսությունները այժմ ապրում են իրենց անկման տարիները։ Տնտեսական ճգնաժամը վերջնականապես քանդում է կապիտալիստական սիստեմի հիմնաքարերը։ Կապիտալիզմը որհասական ճիգեր է թափում աղատվելու այդ խորտակումից. բայց իզուր. որ որի վրա աճում է գործազուրկների բանակը, հաղարավոր գործարաններ, հանքեր ու ֆաբրիկաներ փակվում են իրար հետևից։ Կապիտալիստական տնտեսությունը խեղդվում է ապրանքների ավելցուկից, իսկ ժողովուրդը սոված է և մերկ։ Կապիտալիստական տնտեսության արտադրական ուժերն անհամեմատ ավելի յեն զարգացել, քան ժողովրդի սպառողական (զնողական) կարողությունը։ Այս հանգամանքը կապիտալիզմի ներքին հակասություններից գլխավորն է, վորի հետևանքով էլ նա պիտի խորտակվի։

Մենք հնգամյա պլանն ամբողջությամբ իրագործում ենք վոչ թե 5 տարում, այլ ավելի կարճ ժամանակամիջոցում՝ 4 տարում։ Այս տարին՝ հնգամյակի վերջին և ավարտական տարին է։ Մեր տնտեսության մի շարք ճյուղերն իրենց հնգամյա պլանն իրագործել են ավելի կարճ ժամանակամիջոցում. որինակ՝ մեր Խորհրդային Միության նավթարդյունաբերությունն իր հնգամյակն ավարտել է յերկու և կես տարում։

Մեր հնգամյա պլանի լրիվ և ժամանակից առաջ իրագործելը կատաղեցնում է կապիտալիստներին, վորովհետև այդ պլանի լրիվ իրագործումը հնարավորության է տալիս մեզ հարկավոր բոլոր տեսակ մեքենաները մեզ յերկրում պատրաստել։ Մենք այժմ արտադրում ենք մեքենաներ, վորոնցով պատրաստում ենք մեր տնտեսության բոլոր ճյուղերին անհրաժեշտ ու հարկավոր քանակությամբ մեքենաները»։

Կարդալը

Մշակել «Հարվածայինների հավաքը» հոդվածը։ Դասատուն նախորոք կարդում է ամբողջ հոդվածը սկզբից մինչև վերջը, ապա միայն որվա դասը—հոդվածի 29-րդ յերեսում զետեղված մասը (մյուս մասը պահել հաջորդ որվան)։ Դասատվից հետո կարդում են շատ թե քիչ ուժեղները և ապա բացատրում անհասկանալի

բառերը։ Վերջում դասատուն պատմել է տալիս կարդացածի և խոսածի բովանդակությունը։

Գրավոր

Նախկին դասերի յեղանակով մշակել ու գրի առնել հետևյալ փոքրիկ կտորը.

«Հավաքվել են հարվածային բանվորները։ Ընկ. Ռահիմովը զեկուցում տվեց հարվածային ու սոցմրցման աշխատանքների մասին։ Մեծ տեմպեր են առաջացրել։ Պլանը կատարել են ավելորդով»։

Ունակություններ

Կրկնել լեզվական այն ունակությունները, որ մշակել են անցած դասերի ժամանակ, օրինակ՝ գլխատառով գրելու որենքները, տողադարձը և այլն։

Հաշիվ

Հետևյալ խնդրի օրինակով կազմել յերկու խնդիր, վճռել ու գրանցել տետրերում։

«Հարվածային Ռուբենը մի որում պատրաստեց 32 կտոր իր, իսկ մյուս որը՝ 9-ով ավելի։ Քանի կտոր իր պատրաստեց նա յերկու որում»։

Բացի դրանցից կրկնել ու խորացնել գումարման գործողության բարդ դեպքերը 100-ի շրջանում։ Բազմապատկման գործողությունը սուղել գումարման գործողությամբ և այլն։

II

30-րդ զբաղմունքի զրույցի բովանդակությունը

Շարունակել անցած դասի զրույցը, այն ձևով, որ սերտ կապ ստեղծվի նախորդ և ներկա դասերի միջև, մոտավորապես հետևյալ բովանդակությամբ.

Հնգամյա պլանի իրագործման սոցիալիստական մեթոդներն են հարվածայնությունն ու սոցմրցումը։ Խ. Ս. Հ. Մ-յան մեջ միլիոնավոր բանվորներ, բանվորուհիներ, կոլխոզնիկներ ու ծառայողներ իրենց հարվածային են հայտարարել ու սոցմրցման կանչել իրար՝ ավելի արագ թափով իրագործելու իրենց արդյունաբերության հնգամյա պլանը։ Նրանք աչալուրջ հետևում են որ ժամանակին ձեռք առնվեն անհրաժեշտ միջոցները արդյունաբերության մեջ ճեղքվածք չառաջացնելու համար։ Հետևում են, որ ներքին բոլոր միջոցները ոգտագործվեն, առաջադրում են մի շարք թանկարժեք առաջարկություններ, իրենց հանդիպակած պլանը և այլն։

Կարդալը

Մշակել «Հարվածայինների հավաքը» հոդվածի յերկրորդ մասը։ Սկզբում կարդում է դասատուն, ապա շատ թե քիչ ուժեղները, որից հետո պատմում են կարդացածի և զրույցի բովանդակությունը։

Գրավոր

Նախկին դասերի յեղանակով մշակել ու գրի առնել 30-րդ եջի վրայից հոդվածի 6-րդ, 7-րդ և 8-րդ կետերը։

Հաշիվ

Նախորդ դասի խնդիրների ու վարժությունների օրինակով մշակել մի քանի խնդիրներ ու վարժություններ, կապելով գումարման և բազմապատկման գործողություններն իրար հետ։

ԶԲԱՂՄՈՒՆՔ № 31

Զրույցի բովանդակությունը

Կրկնել անցած դասը։

Հնգամյա պլանի արագ ու լրիվ իրագործումը մեր յերկրում սոցիալիստական տնտեսության կշիռն ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ դարձնում է գերակշռող։ Դրա հետ միասին տնտեսության մեջ դարձնում է գերակշռող։ Դրա հետ միասին աճում է նաև արդյունաբերական պրոլետարիատի թիվը։ Հնգամյա պլանի առաջին տարում մեր համայնացրած տնտեսությունը կազմում եր ամբողջ ժողովրդական տնտեսություն 52,7 տոկոսը, պրոլետարիատի թիվը հասնում եր 11 և կես միլիոնի։ Հնգամյակի 3-րդ տարում համայնացրած տնտեսությունն արդեն կազմում եր 81 և կես տոկոսը, իսկ պրոլետարիատի թիվը հասել եր 18 և կես միլիոնի։ Հնգամյակի չորրորդ և վերջին տարում համայնացրած տնտեսությունը կազմելու է ամբողջ ժողովրդական տնտեսության 90,7 տոկոսը, իսկ պրոլետարիատի թիվը հասնելու է 21 միլիոնի։

Մեր տնտեսության այդ հսկայական նվաճումները մեզ հնարավորության են տալիս ավելի լավացնել աշխատավորության տնտեսական, կենցաղային և կուլտուրական դրությունը։ Կոոպերացիայի դերը գնալով մեզ մոտ դառնում է հսկայական։ Նա ամբողջովին սպասարկում է մեր սոցիալիստական տնտեսությունը, ոժանդակում է նրա զարգացմանը, բանվորներին մատակարարում է անհրաժեշտ մթերքներ ու ապրանքներ։ Նա միաժամանակ խոշոր ուշադրություն է դարձնում աշխատավորության կուլտուրական-կենցաղային խնդիրներին։

Վերջին տարիներում կոոպերացիան այս ասպարեզում մեծ նվաճումներ ունի։ Այդ նվաճումների շարքին են պատկանում փակ բաշխիչները, վորոնք բացված լինելով այս կամ այն արդյունաբերական ձեռնարկության կից, ամբողջովին սպասարկում են այդ ձեռնարկության մեջ աշխատող բանվորներին ու բանվորուհիներին։

Կարդալը

Մշակել դասագրքի 31 էջի «Փակ բաշխիչ» հոդվածը։ Նախորոք կարդում է դասատուն, բացատրում անհասկանալի բառերը, կարդացնում է շատ թե քիչ ուժեղներին և ապա խմբովին։ 4-րդ նախադասության (և ապա 5-րդ) մեջ պատահող «և» տառնչյունը մշակել, առանձնապես կանգ առնելով դրա վրա։

Ուղղագրական ունակություններ

Կրկնել անցած դասերին ձեռք բերած ունակությունները։ Ծանոթացնել «և»-ի գրության հետ (թե գլխատառ և թե փոքրատառ)։

Գրավոր

Արտագրել հոդվածի ներքևում զետեղված ձեռագիր տեքստը։

Հաշիվ

Ամրապնդել բազմապատկության (20-30-ի շրջ.) տեխնիկան։ Վարժությունների համար վերցրած օրինակները հնարավորության չափ վերածել խնդիրների, կապելով վերջիններս հոդվածի բովանդակության հետ։ Բազմապատկումը գումարման միջոցով սուզել։

ԶԲԱՂՄՈՒՆՔ № 32

Գյուղի բովանդակությունը

32-րդ յերեսում զետեղված տեքստի շուրջը կազմակերպած զրույցից յեզրակացնել, վոր մեր յերկրում քաղաքի պրոլետարիատն ու գյուղի աշխատավորությունը ձեռք-ձեռքի տված սոցիալիզմ են կառուցում։

Ցարական կառավարության ժամանակ գյուղերը մութ եյին, խավար ու հետամնաց։ Հսկայական տարբերություն կար քաղաքի և գյուղի մեջ։ Մեր սոցիալիստական տնտեսության զարգացումը մեզ հնարավորության է տալիս վերացնելու այդ տարբերությունը։ Կառուցվում են սոցիալիստական տիպի քաղաքներ ու գյուղեր։

Գյուղի սոցիալիստական վերակառուցման գործում մենք հսկայական նվաճումներ ունենք։ Այդ նվաճումները ձեռք ենք բերել նորագույն տեխնիկան գյուղ փոխադրելով։ Գյուղի այդ վերակառուցումը տեղի է ունենում մեր սոցիալիստական արդյունաբերության աճման հիման վրա։

Գյուղն առաջ միացած եր քաղաքի հետ ապրանքափոխանակության միջոցով, վորը տեղի եր ունենում շուկայի ոգնությամբ. նախկին անկազմակերպ, տարրերային ապրանքափոխանակումը այժմ փոխարինված է կազմակերպված, պլանավոր արտադրական կապով։

Գյուղի և քաղաքի այդ նոր արտադրական կապի ամրապնդման գործում մեծ անելիք ունի կոոպերացիան։ Նա հեշտացնում է մթերքների փոխանակումը քաղաքի և գյուղի միջև, բարձրացնում է գյուղատնտեսության արտադրողականությունը, ոժանդակում է սոցիալիստական տնտեսության հիմքի կառուցումն արագ ավարտելու գործին։

Կարդալը

Մշակել 32-րդ էջի «Քաղաքի և գյուղի կապը» հոդվածը, նախընթաց դասերի օրինակով։

Հնարավորության չափ զարգացնել սովորողների կարդալու տեխնիկան. դրա համար աշխատել ամեն որ կարդացնել դասը բոլոր սովորողներին (թե նոր և թե անցած դասը)։

Գրավոր

Արտագրել հոդվածի ներքևում զետեղված ձեռագիր հոդվածը։ Բացի դրանից գրատախտակից արտագրել։

«Քաղաքի և գյուղի կապի ամրապնդման գործում մեծ դեր է խաղում կոոպերացիան։ Նա արագացնում է սոցիալիստական տնտեսության հիմքի կառուցման ավարտումը»։

Հաշիվ

Նախորդ դասի օրինակով լուծել մի քանի խնդիրներ ու օրինակներ (բազմապատկումն ու բաժանումը)։

ԶԲԱՂՄՈՒՆՔ № 33

Գյուղի բովանդակությունը

Կրկնելով անցած դասը, կապել նրա հետ նորը։

33-րդ յերեսում զետեղված նկարի շուրջը կազմակերպած զրույցի ժամանակ պարզել, վոր մեր ծանր արդյունաբերության զարգացման հետևանքով այժմ մեծ քանակությամբ մեքենաներ ենք արտադրում և փոխադրում գյուղ։

Գյուղացու աշխատանքը հիմա մեքենայացման է յենթարկվում։ Գյուղում արմատական է արվում հին ձևի աշխատանքը, նրա տեղ ամրապնդվում է նոր, սոցիալիստական ձևի աշխատանքը։ Կոմբայնների, տրակտորների, կալող ու քամող և այլ տեսակի մեքենաների հետ միաժամանակ գյուղը մուտք է գործում նաև ելեքտրականությունը։ Կառուցվում են նորանոր ելեքտրոկայաններ, վորոնք ոժանդակում են յերկրի արտադրական ուժերի զարգացմանը։

Կարդալը

Նախապատրաստական զրույցից հետո կանգ առնել «Նոր ձևի աշխատանք» Ֆրազի վրա, վորը մշակելով՝ անջատել «ձ» տառ-հնչյունը և յուրացնել տալ ծանոթ յեղանակով։

33-րդ յերեսում զետեղված «Նոր ձևի աշխատանք» հոդվածը մշակել։ Սկզբում դասատուն և կարդում, բացատրում անհասկանալի բառերը, ապա կարդացնում է մի քանիսին և խմբովին (մաս-մաս)։ Վերջում կարդացածի և զրույցի բովանդակությունը պատմում են սովորողները—հարց ու պատասխանի ձևով։

Ուսակություններ

Նախկին դասերի յեղանակով ծանոթացնելով «ձ» տառ-հնչյունը, ծանոթացնել նրա գլխատառի և փոքրատառի գրության ձևի հետ, դասագրքում գտնել ու այդ տառ-հնչյունով նոր բառեր, նրանցից նախադասություններ կազմել ու գրի առնել։

Գրավոր

Արտագրել հոդվածի ներքևում զետեղված ձեռագիր տեքստը։

Հաշիվ

Նույնը։ Կամաց-կամաց բարդացնել բազմապատկման գործողությունը, կապելով նրա հետ բաժանումը։

ԶԲԱՂՄՈՒՆՔ № 34

Զրույցի բովանդակությունը

Նույնը, ինչ վոր խոսվել է № 32 դրաղմունքի ժամանակ։ Այս դասը պիտի հանդիսանա վորպես կրկնողություն։ Առանձին ուշադրություն պիտի դարձնել կարդալու տեխնիկայի վրա։

Կարդալը

Նախկին դասերի յեղանակով մշակել «Գյուղ և քաղաք» հոդվածը։

Գրավոր

Գրքից արտագրել տալ վոտանավորի սկզբի չորս տողը։

Հաշիվ

Խորացնել նախորդ դասի ժամանակ մշակած նյութը։

ԶԲԱՂՄՈՒՆՔ № 35

Զրույցի բովանդակությունը

1. Կրկնելով անցած դասը, կապել նորը նրա հետ։

2. Մեր նվաճումները գյուղատնտեսության կոլեկտիվացման գործում։ Հնգամյակի 3-րդ տարում չքավոր և միջակ տնտեսությունների 62 տոկոսը կոլեկտիվացման է յենթարկվել։

3. Ծանր արդյունաբերության զարգացման հետևանքով նորագույն տեխնիկան գյուղ ենք փոխադրում և նրա միջոցով վերակառուցում գյուղը։ Հնգամյակի չորրորդ, վերջին տարում հիմնականում կավարտենք ԽՍՀՄ-յան մեջ գյուղական տնտեսությունների կոլեկտիվացման գործը։

4. Արդյունաբերական պրոլետարիատը ղեկավարում է գյուղի վերակառուցման գործը։ Բանվորական բրիգադները վերանորոգում են կոլխոզների մեքենաները, գործիքները, ղեկավարում նրանց աշխատանքները և կոնկրետ ցուցմունքներ տալիս։

Կարդալը

Դասագրքի 35-րդ էջի «Դեպի նոր կյանք» հոդվածը նախընթաց յեղանակով մշակել։

Գրավոր

Գրքից արտագրել հետևյալ կտորը՝ «Բրիգադը նորոգեց կոմունայի...» մինչև վերջը։

Հաշիվ

Անցնել 50-ի շրջանում բազմապատկման և բաժանման գործողությունները։

ԶԲԱՂՄՈՒՆՔ № 36

Զրույցի բովանդակությունը

1. Կրկնելով անցածը վերհիշել, վոր ամեն մի պրոֆմիություն իր շարքերում միացնում է տնտեսության նույնանման

ճյուղերում աշխատողներին։ Պրոֆմիությունները անմիջապես մասնակցում են մեր սոցիալիստական շինարարությանը։ Նրանք ծավալում են աշխատանքի սոցիալիստական մեթոդները՝ սոցմրցումն ու հարվածայնությունը, կազմակերպում են հանդիպական պլաններ, ապահովելով 5-ամյա պլանի 4 տարում իրագործումը և այլն։

2. Պրոֆմիությունները կուլտուր-կրթական մեծ աշխատանք են տանում իրենց անդամների մեջ, ոժանդակում են կադրեր պատրաստելու գործին։ Մասսաներին դաստիարակում են կոմունիստական ոգով։

3. Պրոֆմիությունները Աշխատանքի Ժողկոմատի հետ միասին հսկում են, որ տեղերում ճիշտ կիրառվեն աշխատանքի բոլոր օրենքները։ Կռվում են լոդրության, խանդարումների, ջնասարարության, պրոդուլների, հոսունության, անդիմության (ոբեզլիչկա) դեմ և այլն։

4. Պրոֆմիություններն ամեն մի գործարանում, ֆաբրիկայում, հանքում, հիմնարկության և ձեռնարկության մեջ ունեն իրենց տեղական բջիջները։ Չավոդում կա զավկոմ, ֆաբրիկայում՝ ֆաբկոմ, հանքում՝ հանքկոմ և այլն։

5. Նախկին դասերի յեղանակով առանձնացնել «ֆ» տառ-հնչյունը, կազմելով նոր բառեր, բառերից՝ նախադասություններ և այլն։

Կարդալը

Մշակել դասագրքի 36-րդ եջի «Պրոֆմիություն» հոդվածը սովորական յեղանակով։

Ունակություններ

Կրկնել ձեռք բերած ունակությունները։ Ծանոթացնել «ֆ» տառ-հնչյունի գրության հետ (գլխատառ և փոքրատառ). «ֆ» և «փ» հնչյունների արտասանությունը համեմատել և, տարբերությունները դանելով՝ կիրառել գործնականում։

Գրավոր

Ս.բատագրել հոդվածի ներքևում գետեղված ձեռագիր հոդվածը։

Հաշիվ

Բազմապատկում և բաժանում կլոր տասնյակներով 100-ի շրջանում։ Նույնը կլոր հարյուրներով 1000-ի շրջանում (բանավոր)։

ԶԲԱՂՄՈՒՆՔ № 37

Զրույցի բովանդակությունը

Կրկնելով անցած զրույցը կարճառոտ կերպով՝ զարգացնել այն նոր դասի համար հետևյալ ձևով.

1. 37-րդ եջի «Ճաշարան» հոդվածի բովանդակության շուրջը կազմակերպած զրույցը պետք է շեշտի, որ մեր սոցիալիստական տնտեսության զարգացման հետ միաժամանակ բարելավվում է նաև աշխատավորության կուլտուր-կրթական, կենցաղային ու տնտեսական դրությունը։ Ամեն մի արդյունաբերական քաղաքում կառուցվում են կուլտուրայի պալատներ, հանդստյան տներ, ֆաբրիկա-խոհանոցներ և այլն։

2. Ֆաբրիկա-խոհանոցները գործարաններում ու ֆաբրիկաներում ճաշարաններ են բացում։ Այդ ճաշարաններում ճաշը ավելի եժան, սննդարար և համեղ է լինում։ Բանվորուհիների համար այդպիսով հնարավորություն է ստեղծվում ազատվել տան խոհանոցից, ազատ ժամերին զնալ ակումբ, զպրոց, է այլն։ Այդպիսով իրագործում ենք ընկ. Լենինի խոսքերը՝ «ամեն մի խոհարարուհի պիտի սովորի կառավարել յերկիրը»։

3. Նախընթաց յեղանակով մշակել «ճ» տառ-հնչյունը։

Կարդալ

Մշակել 37-րդ եջի «Ճաշարան» հոդվածը սովորական յեղանակով։

Գրավոր

Հոդվածից արտագրել՝ 2-րդ կետը «Բանվորները ուրախ են...»։ ուշադրություն դարձնել կետադրության վրա և հետևողական կիրառել ուղղագրական ունակությունները։

Հաշիվ

Բազմապատկումն ու բաժանումը 100-ի շրջանում 2-ով, 3-ով, 4-ով (բանավոր ու գրավոր), որինակ,

$11 \times 2 =$ $\times 11$ $\times 11$ և այլն, շա

$11 \times 3 =$ $\times 2$ $\times 3$ ու այլն։

ԶԲԱՂՄՈՒՆՔ № 38

Զրույցի բովանդակությու

1. Կրկնել անցած դասը (համառոտ)։

2. 38-րդ յերեսում գետեղված «Բոլոր ֆրոնտներում մերն է հաղթանակը» հոդվածի շուրջը զրույց կազմակերպել։ Պարզել, որ մեր առաջին ֆրոնտը արտաքին ու ներքին ռազմական ֆրոնտն

ՀՀ Ազգային գրադարան
NL0235777

С 32-1 А 46 54. 821

ներ։ 1917-21 թվականների քաղաքացիական կռիվների ժամանակ մեր յերկրի բոլոր աշխատավորները Կոմկուսի ղեկավարության տակ լարել են իրենց ուժերը և, մաքրելով մեր յերկիրը հակահեղափոխական զորքերից ազատվել են Հոկտեմբերի նվաճումները ու պրոլետարիատի դիկտատուրան։ Այդ ֆրոնտում մենք հաղթեցինք։

3. Մեր խաղաղ շինարարության տարիներին և ներկայումս համաշխարհային կապիտալիզմի լակեյներն ամեն կերպ աշխատել են մեզ պատերազմի մեջ քաշել։ Նրանք մի քանի անգամ նույնիսկ հարձակումներ են գործել մեր յերկրի սահմանների վրա (Հեռավոր–Արևելյան յերկաթուղագծի կոնֆլիկտը), բայց ստացել են արժանի հակահարված ու դուրս շպրտվել մեր յերկրի սահմաններից։ Մեր Կարմիր Բանակը միշտ անահ կանգնած է մեր յերկրի սահմաններում։ Մենք պատերազմ չենք ուզում, բայց միշտ պատրաստ ենք պաշտպանելու մեր սոցիալիստական հայրենիքը։

4. Յերկրորդ ֆրոնտը շինարարական ֆրոնտն է։ Այս տարի ավարտում ենք 5-ամյա պլանը։ Հինգնամյակում ավարտել ենք սոցիալիստական տնտեսության հիմքի կառուցումը, մտել ենք սոցիալիզմի շրջանը։ Այս ֆրոնտում դարձյալ հաղթող ենք հանդիսացել։ Այժմ մեր յերկրի տնտեսական հզորության աճումն ու զարգացումը հանգստություն չի տալիս կապիտալիստներին։

5. Յերրորդը՝ լուսավորության ֆրոնտն է։ Վերացնում ենք ցարական իշխանության խայտառակ ժառանգությունը՝ անգրագիտությունն ու տգիտությունը։ Հայտարարել ենք ընդհանուր պարտադիր ուսում։ Դպրոցները դարձնում ենք պոլիտեխնիկական։ Ստեղծում ենք սեփական տեխնիկական կադրեր, մեր տնտեսության ապագա կարմիր հրամանատարներ ենք պատրաստում։ Այս ֆրոնտումն ել հաղթանակը մերն է։

Կարդալը

Մշակել «Բոլոր ֆրոնտում մերն է հաղթանակը» հոդվածը նախկին դասերի յեղանակով։

Գրավոր

Արտագրել հոդվածի ցանկացած կտորը։ Ուշադրություն դարձնել կետադրության վրա և ճիշտ կիրառել ուղղագրական ունակությունները։ Հետևել ձեռագրերին։

Հաշիվ

Անցածի յեղանակով բազմապատկել և բաժանել 2 նիշ թվերը միանիշով, 2-նիշով, յեռանիշով, քառանիշով, 5-նիշով (100-ի շրջանում)։

ՊԵՏ[redacted]ՐԱՆ ГОС. БИБЛИОТЕКА ՀՍՍՌ-Արա.ՍՍՌ